

4543

491.99-8
S-45
I 1313


0194 - 5/21/38

5/22/2002

49L542-82
m-28-45

Ա. ՏԵՐ-ՂԵՂՈՆԴԵԱՆ

ԱՀԱՅՐԵԱՆԻ ԼԵԶՈՒ



491.99-8

S-45

մի

Ն. ՏԵՐ-ՂԵԽՈԽԵԱՆ



ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

428
215-S5

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

եհ

ՍԿՐՄԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

19963 - 59

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

37-ինության միջ



Թ. Բ. Յ. Լ. Ի. Պ. Ս.

ՏՊՈՒԹՅԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆՈՒԿԻ ՓՈՂՈՑ № 3.

1913

2010

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ա. ՑԱՐԻՆ ԱԹԱՋԻՆ ՑՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

լոյս է ենակ 1871 թուի սեպտեմբերին, այսինքն սրանից ուղիղ
42 տարի առաջ: Տպագրուել է սա ձեռքի մեմնայով Համբարձում
Էնքիանձեանցի տպարանում 2400 օրինակ, որ իւր ժամտնակի հա-
մար խոշոր թիւ էր:

Այս շիրծը պաշտպանութեան
է պարզ Ծրաբը
Դաշտամարք

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս դասագիրքը կազմելիս՝ մենք խսկբանէ այն կարծիքին
ենք եղել, որ առաջին և երկրորդ տարուայ ուսուցման նիւթերը
համապատասխան բաժանմունքներում պէտք է մի ուսուցչի ձեռքին
լինին և դա պէտք է լինի մայրենի լեզուի ուսուցչիը. մենք կար-
ծել ենք, որ մայրենի լեզուի դասագիրքը, աւելի շատ, քան մի
ուրիշը, կոչուած է նիւթ մատակարարել ուսուցչին, բացի լեզուի
դասերից, նաև միւս օժանդակիչ առարկաների՝ բարոյախօսութեան,
իրազննութեան և վայելչագրութեան համար. մենք կարծել ենք և
կարծում ենք, որ բոլոր առարկաները, նաև թւաբանութիւնն ու
հայրենագիտութիւնը, միւնոյն ուսուցչի ձեռքին լինելով և աւելի
կապակից ու ներդաշնակ ընթանալով մայրենի լեզուի դասերի
հետ, մանուկների յիշողութեան մէջ խառնաշփոթութիւնն չեն
մտցնիլ, նրա գլուխ մէջ, եթէ կարելի է այսպէս ասել, չեն գրա-
ւել այս ուղայն խորշը, առանց գիտենալով՝ թէ որպիսի ոք է հարեւան
խորշի բնակիչը: Ահա այս է պատճառը, որքմենք աշխատել ենք
ոչ միայն լեզուի ուսուցման համար բազմակողմանի վարժութիւն-
ներ տալ այս գրքի մէջ, այլ և նրան զուգընթաց տուել ենք միւս
օժանդակիչ առարկաների համար բաւականաչափ նիւթեր. մենք
զուգակցել ենք բարոյախօսականը իրազննականի, նկարագրա-
կանը պատմողականի, արձակը չափաբերականի հետ... Ճնշում
ենք հաւատալ, որ այս փոքրիկ գրքոյկը խնամքով անցնելուց յե-
տոյ, տարուայ վերջին ամենայն ոք կը նամոզուի թէ որքան կա-
րենը ագոյն նիւթեր է ամբարել մանուկը թէկուզ հէնց միմիայն
մայրենի լեզուից:—Պետական ուսումնարաններում, ուր մայրենի
լեզուի ուսուցումը սկսում է արդէն գրադէտ մանուկների հետ և
ուր դասատուն կարիք չունի ցուցադրած մանրամասնութիւն-
ների մէջ մտնել, այս գրքոյկը հայ աշակերտներին, այսուամե-
նայնիւ, շատ ու բազմագիմի նիւթեր է տալիս՝ բառագիտութեան,
զրուցատրութեան, փոխադարձ թարգմանութեան և բերանացի ու
գրաւոր վարժութիւնների համար:

Ընթերցողը կը նկատի, որ այս տպագրութեան ժամանակ
մենք աշխատել ենք այնպիսի փոփոխութեան ենթարկել մեր դա-
սագիրքը, որ սա կարողանայ միաժամանակ ծառայել հայախօս

և օտարախօս հայ մանուկներին, այսինքն պիտանի լինի և այն դպրոցներին, ուր սովորող մանուկները օտարախօս են:

Մայրենի լեզուի և խօսակցական-զրուցատրական լեզուի մէջ մենք որոշ տարբերութիւն ենք գնում: Օտարախօս հայ մանուկների մայրենի լեզուն ևս մենք համարում ենք հայերէնը. իսկ նրանց զրուցատրական լեզուն—մի բարբառ, որով նրանք փոխանակում են իրանց մտքերը առօրեայ կեանքում,—առանց մի ըրպէ անգամ հրաժարւելու այն ներքին ինքնարուղիս ձգտումից, որ նրանց մղում է դէպի մայր լեզուն: Վրացախօս կամ թուրբախօս հայ մանուկի համար հայոց լեզուն այն չէ, ինչ-որ վրացի մանուկի համար նոյն հայերէնը: Միւս կողմից վրացախօս, թուրբախօս կամ չէրքէզախօս հայ մանուկների վերաբերմունքը դէպի իրանց մայր-լեզուն, դէպի հայերէնը, բոլորովին համանման են, մինչեռ վրացի, թուրբ և չէրքէզ մանուկների վերաբերմունքը դէպի նոյն հայերէնը բոլորովին տարբեր: Օտարախօս հայը չնայելով, որ նրա զրուցատրական լեզուն հայերէնը չէ, երբէք չէ դադարում սօցիալական և ժառանգական կապերով միացած մեալ ազգի ընդհանուր զանգուածի հետ. հետևաբար այն հայերը, որոնց խօսակցական լեզուն հայերէնը չէ, իրանց մայր լեզուն սովորելու համար աւելի լաւ պայմանների մէջ են, քան թէ մի այլ բոլորովին օտար լեզու սովորելիս: Այս տեսակէաից մենք կարծում ենք, որ այս գրքոյկը կարող պիտի լինի որոշ ծառայութիւն մատուցանել նաև օտարախօս հայ մանուկներին:

Որպէսզի մեր դասագիրքը պիտանացու լինի օտարախօս հայ մանուկներին ևս, մենք աշխատել ենք սրա սկզբի դասերի նիւթը առնել բացառապէս միջազգային նշանակութիւն ունեցող բառերից: Այսպիսի բառեր մենք համարում ենք ծայնարկութիւնները, որոնք բոլոր լեզուներով միենոյն են: Երբ մանուկը մօտենում է դատարկ կարստին և ձայն է տալիս՝ նա պիտի իւր ձայնի անդրագարձութիւնը լսէ, միենոյն է հայախօս է նա, թէ թուրբախօս. երբ նա վայր է ընկնում կոտրուող ճղնից, նա այ պիտի գոչէ... Այսպէս էլ միւս ձայնարկութիւնների վերաբերութեամբ: Հարկաւոր է միայն, որ այդ ձայնարկութիւնների նշանագրերը պարզ լինին, ինչպէս պարզ են իրենք ձայնարկութիւնները: Այդ կողմից հայոց լեզուն տալիս է մի շարք գժուարութիւններ, որոնք, բարեբաղդաբար, անյաղթելի չեն: Սկզբի դասերի համար այդ գժուարութիւնները ներկայացնում են ու և տառերը, որոնցից առաջինը պարզ հնչինի նշանագիր լինելով, պիտի ունենար մի

պարզ գիր, մինչդեռ մեր այբուբենի մէջ ու բաղկացած է համարւում երկու տառից. իսկ յ, որ իսկզբանէ կիսաձայն է, այսօր կատարում է նաև բաղաձայնի պաշտօն, երբեմն մինչև իսկ համը է մնում: Միջազգային լեզուի (ձայնարկութիւնների) հնչիւններն արտայայտող այդ երկու գայթակղեցուցիչ գրերը հեշտութեամբ յարմարւում են մեր պահանջներին, ու-ի երկու մասերը մի մազային գծով շաղկապւում են միմեանց հետ (ինչպէս այդ լինում է գրելու ժամանակ) և տյդպիսով ու պարզ հնչիւնի համար մենք ունենում ենք ու պարզ գիրը: Անցնելով յ նշանագրին, մենք գիտենք որ նա գրագիտութեան սկզբին ունեցել է միայն մի հնչիւն և մինչև օրս պահում է իւր պատմական հնչիւնը, այսինքն համարւում է կիսաձայն ի կամ հնչուում է որպէս ն. Միայն այբբենական մասի վերջում մենք ստիպուած ենք հասկացնել մանուկներին, որ այդ կիսաձայն տառը բառի սկզբում կարդացուում է որպէս բաղաձայն հ: Կարեւոր է, սակայն, որ այդ կիսաձայն յ-ն միշտ իրան նախընթաց ձայնաւորի հետ կարդացուի, նրանից անբաժան—որ՝ այ, ույ, ոյ, էյ, օյ վանկերը գրագիտութեան սկզբում համարւուն անբաժանելի հնչիւններ և գրեր *):

Այսպէս անա, մեր դասագրքի առաջին դասերը ձայնարկութիւններ են: Այդ ընդհանուրին մատչելի ու հասկանալի բառերից յետոյ, ամենամօտիկ և ամենաընտանի նիւթը, որ կարող է կապել օտարախօս հայ մանկանը իւր հայերնի լեզուի հետ, իրան շրջապատողների ու մերձաւորների անուններն են՝ հայ, հայր, մայր և այլն: Մենք աշխատել ենք զգուշութեամբ ու քայլ-առքայլ առաջ ուղղութեամբ: Խնդը դասագիրքը ցոյց է տալիս, թէ ինչպէս և որքան յաջող ենք լուծել մենք այդ խընդիրը: Մերձաւոր անձնաւորութիւնների և մօտիկ առարկանների անունները տալով որպէս նիւթ լեզուի ու գրագիտութեան, աստիճանաբար աւանդում ենք մանուկներին այդ առարկանների քանակը, նրանց որպիսութիւնը, գործողութիւնը և, վերջապէս, առաջարկում ենք կապակից ընթերցանութեան համար պարզ նիւթեր:

*) Մեր երիտասարդ ուսուցիչներից ոմանք հայոց լեզուի հեգման կանոնների մասին շատ թիւր գաղափար ունին. նոքա լաւ չեն ըմբռնում մեր լեզուի հիմնական կանոնը երկու ձայնաւորով կազմուած գանկերի վերաբերութեամբ և հանդիպելով եա, եօ, ուա, և մանաւոնդ թէ այ, ոյ, էյ, հնչիւններին, հեգում են բառերը հայոց փոխանակ հայոց, պատուէր փոխանակ պատուէր, գոյ-յական փոխանակ գոյ-յական որպէս և նայ-եցի, կը նայ-է, նայ-ում է, նայ-իր, նայ-ող, նայ-ած, բայց ոչ նայ-եցի (որ է նա-հեցի):

Վայելուչ գրութիւնը մենք ինքնուրոյն և անկախ առարկայ
ենք ընդունում, այդ պատճառով այս դասագրքի սկզբում տալիս
ենք միայն մի-մի տառ և վերջումը դնում ենք ամբողջ այբուբենը:
Ուսումնարանը վայելչագրութեան համար պիտի ունենայ առան-
ձին դասեր անկախ լեզուի դասերից: Այս պահանջից շեղուելով,
մենք կը հասնենք այն ցաւալի հետևանքին, որին հասել ենք շատ
դպրոցներում, այսինքն վայելուչ գրութիւն չենք ունենալ: Այս
պահանջը կապ չունի գրութեան տարբեր սիստեմների հետ.
ամենայն դէպրում սա ստիպողական է և սրան ուրանալ, նշանա-
կուն է՝ արհամարել հայերէն վայելուչ գրութեան կարեւորու-
թիւնը: Եւ, ցաւալի է խոստովանի՝ մեր դպրոցական վարիչների
մեծագոյն մասը անգիտակցօրէն ընթանում է այդ շաւզով: Գրաւոր
վարժութիւնները, որոնք երկու նպատակ ունին՝ ուղիղ գրել, և
վայելուշ գրել, պիտի յաջորդեն և ոչ նախորդեն տպագիր վար-
ժութիւններին:

Անշուշտ խօսք կը լինի, թէ ինչպէս կարող է միենոյն նիւթը
միաժամանակ պիտանի լինել հայախօս և օտարախօս հայ մա-
նուկներին, այն էլ միեւնոյն ծաւալով: Մենք այդ չենք պնդում.
Նիւթը որ մենք առաջարկում ենք, ըստ մեզ, մատչելի է բոլոր
մանուկներին, որոնց աչքի տուած ենք ունեցել, իսկ ծաւալը, ան-
կասկած, տարբեր կը լինի. հայախօս մանուկների համար մեր
առաջարկած նիւթը կարող է բաւարար լինել, որպէս մի տարուայ
պաշար, իսկ օտարախօսները եթէ մի տարումը ամբողջ նիւթը
չանցնեն, ովք կարող է մեղադրել մանուկներին կամ նրանց
ուսուցչին:

Գրքիս բովանդակութիւնն է՝

ա. բուն այբբենարան,

բ. քերակ. տարրական վարժութիւններ, առակ-
ներ, մանկ. ոտանաւորներ,

գ. ընթերցարան:

Նիկողայոս Տէր-Դեւոնդեան

I. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ



w o n

ш о п

ш о п


ll o m



wj

wj

wj, wj, wj,
oj, oj, oj,
wj, wj, wj,



ɛj

ɛj

ɛj, ɛj, wj, wj, oj, oj.
ɛj - ɛj - ɛj, wj - wj - wj, oj - oj - oj, wj - wj - wj.



ψωj

ψωj

ψωj, ψωj, ψωj, ψωj, ψωj, ψωj.
էj, wj, ψωj, ψωj, oj, wj.

u

*)

u

u, uu, u, uu, o, ou.
0u, Uou, Ouu, Uuu, Ush, Uuu.


է, օվ է, uա է, uա օվ է, **)
այս է, այս ոս է, uա է, uա ոսս է.

*) ս՝ ս՝ սուլում է սագը, մանկանը վախեցնում:

**) օվ բառի ուղղագրութիւնը տես 35 երեսում:



հայ




այ, ահ. օյ, օհ. էյ, էհ. վայ, վահ.
այ, ահ. օյ, օհ. էյ, էհ. վայ, վահ.
այ, ահ. օյ, օհ. էյ, էհ. վայ, վահ.

 այ




նայր



սա, սար. տր, ստր. տս, սուս.
ծվ է. սա ծվ է.
սա հայ է. սա հայր է.
ծվ էր. սա ծվ էր.
սա հայ էր. սա հայր էր.




մայր




հայ. հայր. մայր.
ոս. ոտս. ոտր.

մի մայր



մէկ մայր






մոմ, ստր. հար.



մէկ հայ. մէկ հայր. մէկ մայր.

Մա-Նուկ



ճվ է. հայ է, հայր է, մայր է, կին է.
օվ էր. մի հայ էր, մի հայր էր, մի մայր էր, մի կին էր.
ճվ կա. մէկ հայ կա. մէկ հայր կա. մէկ մայր կա. մէկ կին կա.
ճվ կար. մէկ հայ կար. մէկ հայր կար. մէկ մայր կար.

անիմ. մայր անիմ. մէկ մայր անիմ.
անիս. հայր անիս. մէկ հայր անիս.
անի. կին անի. մէկ կին անի.

նա անի.

նա անի մանուկ.

նա անի մի մանուկ.

նա անի մի սիրան մանուկ.

անէր... *)

ասում էր...



անում էր...

կարում էր...

մանում էր...

*) Բերանացի լրացնել կիսատ խօսքերը:

Ճ ի ճ




այծ. ծամ.



անիմ. այծ անիմ. ծամ անիմ. ծիրան անիմ.
անիս. ծիծ անիս. կործ անիս. ծունկ անիս.
անի. մի այծ անի. մի ծամ անի. մի ծիրան անի.

Ճ ր ճ-Մ ա յ ր



ծիծ-ծիծը. այծ-այծը. ծամ-ծամը. ծիրան-ծիրանը.
հայ-հայը. հայր-հայրը. մայր-մայրը. կին-կինը.

ծըծում է.

մանուկը ծըծում է.

մանուկը ծըծում է ծիծ.

մանուկը ծիծ է ծըծում.

այս մանուկը ծիծ է ծըծում.

այս մանուկը ծըծում է մօր ծիծը.

այն մանուկը ծըծում է ծըծ-մօր ծիծը.

ՀՕՀ



Է

հա. չէ.

օվ. ինչ.

Սա օվ է:

Սա մի մանուկ է:

Սա մի շար մանուկ է:

Մանուկը ինչ է անում:

Մանուկը չօշ է անում:

Մանուկը ինչ էր անում:

Մանուկը չօշ էր անում:

ԵՐԿՈՒ ՄԱՐԴ



Է

Վ


Ղ



սանդ.



վարդ.



սարդ.

Այս մարդը իմ հայրն է:—Սա իմ հայրն է:—
Հայրս է:

Այդ կինը իմ մայրն էր:—Դա իմ մայրն էր:—
Մայրս էր:

Այն մանուկը իմ ընկերն էր:—Նա իմ ընկերն
էր:—Ընկերս էր:



գ ի ր

գիր—կիր. գար—կար. սագ—սար. սուգ—սուր.
դարի. գրիչ. կարագ. որագ. գարոն. Գարօ.

կարդոմ է.

Մանուկը կարդոմ է.

Մանուկը կարդոմ է զիր.

Այս մանուկը կարդոմ է զիր:

Այս մանուկը զիր է կարդոմ:

Ես, դու, նա.

Սա, դա, նա.

Այս, այդ, այն.

Ես եմ. ես մանուկ եմ:

Գու ես. դու մարդ ես:

Նա է. նա կին է:



պապ


պաս. պանիր. կապիկ.

տ ա տ

19963 - 59
(8926)



Գու մի տոն.



Երկու շրտուտ.



մի կատու.

Թօռը

թ ռ



թ ի.



թ ա թ.



թ ա ս.

դար, դառ, սար, սառ, բաս, ոսս.

դառ—դառը, նառ—նառը, զառ—զառը.

ծանըր դառը, թըթա նառը, կարմիր զառը.

պաղ, պաղիկ, տատ, տատիկ, մայր, մայրիկ, հայր, հայրիկ,
ծեր, ծերուկ, հօրթ, հօրթուկ, գառըն, գառնուկ, ծառ, ծառուկ.

Կ ա ր դ ա շ Օ


զըսմ են՝ թոռ, մոմ, հոր, հորթ, հով, սով.
կարդամ են՝ թօռ, մօմ, հօր, հօրթ, հօվ, սօվ.

Ա մ լ կ ա ր դ ա շ Վ

զրած է հաւ, նաւ, թեւ, սեւ, թիւ.

կարդա հավ, նավ, թեվ, սեվ, թիվ.

վատ, դաւ, վան, նաւ, վահ, հաւ, կով, կաւ, հով, հաւ.



Կատոն մլսին չըհասաւ,
Այսօր հօ պաս է, ասաւ:

Ի՞նչ է նկարած այս պատկերի վրա.

Ի՞նչպիսի կատու է նկարած.

Ի՞նչ է անում կատուն.

Ի՞նչ ասաւ կատուն:



շուն

Շ

ի ա ց

Ի

հաց, հացը, նոր հացը.
շոն, շոնը, չար շոնը:
Մանուկը ստում էր հաց:
Շոնը մօտ գնաց մանուկին:
Շոնը ինչ արաւ մանուկին:

սպիտակ, սեւ, անոշ, դառը.
կծու, թթու, կանաչ, կարմիր.
սպիտակ շոշան. սեւ հաց.
անոշ ծիրան. դառը նոշ.
կծու պանիր. թթու մածուն.
կանաչ տերեւ. կարմիր վարդ.

Յականը գնում է.
Յականը գնում է տուն.
Յականը այսօր գնում է տուն.
Յականը այսօր տշ է գնում տուն:

Սիմոնը գնաց.
Սիմոնը գնաց դպրոց.
Սիմոնը երէկ գնաց դպրոց.
Սիմոնը երէկ շուտ գնաց դպրոց:

Հայրըս կըմնա.
Հայրըս կըմնա այգում.
Հայրըս էգուց կըմնա այգում.
Հայրըս էգուց երկար կըմնա այգում:

Անոշն ստում է.
Անոշն ստում է ծիրան.
Անոշն ստում է անոշ
ծիրան:
Շոշանը պոկում է.
Շոշանը պոկում է շոշ
շան.
Շոշանը պոկում է սպի-
տակ շոշան:



Այս մանուկը ստում էր.
Այս մանուկը ստում էր հաց.
Այս մանուկը ստում էր սեւ հաց:
Այդ մանուկը կոտրում էր դառը նոշ.
Այն մանուկը պոկում էր կարմիր վարդ:



Անուշի շանը.

Անուշը կանչեց իր շանը.
Անուշը ցայց տռեց շանը
մի նամակ.

Անուշը ասեց.
«Ապա, սիրուն շնիկ,
դու կարդա, ես տեսնեմ՝
ինչ է գրած այս նամակում:

Շանը հոտոտեց նամակը.
շանը նայեց Անուշի երե-
սին.

շանը ասեց.
Ես գիր չեմ կարդում.
Ես միայն պահպանում եմ
հօրլդ տռնը:

Անուշի շանը.

Անուշը կանչեց իր շանը, ցայց տռեց մի
նամակ եւ ասեց. «Ապա, սիրուն շնիկ, կարդա,
տեսնեմ՝ ինչ է գրած այս նամակում»:

Ըստնը հոտոտեց նամակը, նայեց Անուշի
երեսին եւ ասեց. Ես գիր չեմ կարդում. Ես
միայն պահպանում եմ հօրլդ տռնը:

Անուշն ի՞նչ արեց:
Անուշը կանչեց.
Անուշը ցայց տռեց.
Անուշն ասեց.

Անուշն ում կանչեց:
Անուշը կանչեց շանը:
Անուշն ում շանը կանչեց:
Անուշը կանչեց իր շանը:

Անուշն ի՞նչ ցայց տռեց:
Անուշը ցայց տռեց մի նամակ:

Անուշն ի՞նչ ասեց:
Անուշն ասեց՝
ապա, սիրուն շնիկ,
դու կարդա,
ես տեսնեմ՝
ինչ է գրած այս նամակում:

Շանն ի՞նչ արեց:
Շանը հոտոտեց.
շանը նայեց.
շանն ասեց:

Շանն ի՞նչ հոտոտեց:
Շանը հոտոտեց նամակը:

Շանն ի՞նչ ի՞ն նայեց:
Շանը նայեց երեսին:

Շանն ում երեսին նայեց:
Շանը նայեց Անուշի երեսին:

Շանն ի՞նչ ասեց:
Շանն ասեց՝
Ես գիր չեմ կարդում.
Ես միայն պահպանում եմ հօրլդ տռնը:

ԵՐԵՔ

ՄՊԱ


մէկ տղա. երկու տղա. երեք տղա.
այս տղան. այդ տղան. այն տղան.
իմ տղան. քո տղան. նրա տղան.

Ի Ա Ռ

երեք տղա խաղում են. երեք տղա խաղ-են-անում:

Հ Ի Լ

երեք տղա հոլ են խաղում.
հոլի խաղալ, վէգի խաղալ, տիկնիկի խաղալ.
ես—մենք. դու—դուք. ինքը—իրանք.
սա—սրանք. դա—դրանք. նա—նրանք.
մենք անինք. դոք անիք. իրանք անին.
սրանք անին. դրանք անին. նրանք անին.



Կատուին խաղ է,
Մըկանը մահ է:

Կատուն մտաւ հացի տաշտը եւ նրա մէջ
կոտուպ-եկաւ, պահուեց: Մկները պանիր կարծեցին նրան. մէկ-մէկ մօտ էին գալիս տաշտին.
կատուն էլ թաթը մեկնում էր ու խեղդում նրանց:

Մայր-մուկը հասկացաւ վտանգը. նա մօտեցաւ տաշտին ու նայեց պանրին: Ի՞նչ պանիր.
չար կատուն էր տաշտի մէջ: Մայր մուկը գնաց,
իմաց արեց ամենքին: Մկները լսեցին ու թաք-կացան:



ά πι



πι



սպիտակ ձու. կարմիր ձու. դեղին ձու. կապայտ ձու.
կարմիր ձի. սեւ ձի. դեղին ձի. չալ ձի. գորշ ձի.
սեւ օձ. չալ օձ. գորշ օձ. շէկ օձ. կանաչ օձ.
մէկ տանձ, երկու տանձ, երեք տանձ, չորս տանձ.
առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ ձռւկը.
մեր ձիու սանձը, ձեր ծառի տանձը, նրանց ձեռի դանձը.


զատիկ

չ

Զատիկ էր. երեկոյեան զանգը տռին. մանուկները հաւաքուել էին եկեղեցու դռուր. ամեն մի մանուկ ձեռին ներկած ձու տնէր. ձուի էին խաղում. ում ձուն կոտըրւում էր, նա տանուլ էր տալիս. ում ձուն սաղ էր մնում, նա տանում էր:

η կ ա ր դ ա վ օ

օր, որ, օդ, ող, օձ, որձ. ոզնի, ուկի, Ուկան-



Ոզնին եւ օձը.

Օձը տեղ էր ընտրել ծառի խոռոչում.
օձը նընջում էր խոռոչի մէջ:
Ծառին մօտիկ ապրում էր մի ոզնի:
Մի մարդ ուղեց սպանել ոզնուն:

Ողնին խնդրեց օձին:

Օձը ներս ընդանեց ողնուն:

Մարդը հեռացաւ:

Օձը ասեց ողնուն.

ընկեր, տեղըս նեղ է.

ասեղներդ ծակոտում են ինձ.

դուրս գնա այս տեղից:

Ողնին զայրացաւ.

ողնին ասեց.

դու համարձակւում ես.

հիմա ես քեզ ցոյց կը տամ:

Օձը հասկացաւ ողնու չար միտքը.

օձը ինքը դուրս սողաց խոռոչից.

Օձը տեղ էր ընտրել ծառի խոռոշում
 եւ նրա մէջ նընջամ էր: Ծառին մօտիկ ապ-
 րում էր մի ողնի: Մի մարդ տպեց սպանել ող-
 նուն: Ողնին խնդրեց օձին: Օձը ներս ըն-
 դուն եց ողնուն: Մարդը հեռացաւ: Օձը ասեց
 ողնուն. ընկեր, տեղըս նեղ է. ասեղներդ
 ծակում են ինձ. դուրս գնա այս տեղից: Ողնին
 զայրացաւ եւ ասեց. դու համարձակւում
 ես. հիմա ես քեզ ցոյց կը տամ: Օձը հասկացաւ
 ողնու չար միտքը. ինքը դուրս սողաց խոռոչից:
 օձը, օձի, օձին, օձից, օձով, օձում,
 ողնի, ողնու, ողնուն, ողնուց, ողնիով, ողնիում.
 ընտրում եմ. ընտրեցի. ընտրել եմ. ընտրել էր.

Հնդգծած բառերը բացատրեցէք:



աղջիկ

Է

մէկ, երկո, երեք աղջիկ—հովանոցի տակ.
 առաջին, երկրորդ, երրորդ աղջիկը...
 սիրան, տպեղ, արախ աղջիկը...
 իմ, քո, մեր, ձեր, նրանց աղջիկը...

Երեք աղջիկ գալիս էին դպրոցից։ Վատ
եղանակ էր. անձրեւ էր գալիս։ Աղջիկներից
մինը հովանոց ոնէր, շատ մեծ հովանոց։ Մա-
նուկները մտան հովանոցի տակ եւ որախ-որախ
առաջ գնացին դէպի տան։

Արեւ, արեւ, Եկ, Եկ,
Կարմիր արեւ, դուրս Եկ,
Զիզի քարին տիտիկ արա,
Մանկիկներիս մըտիկ արա,
Համ տաքացրա, համ լոյս արա։

որ ես գամ, որ դու գաս, որ նա գա։
որ մենք գանք, որ դոք գաք, որ նրանք գան։

Մ Ե Ղ Ռ.

Հա, ծագեցաւ արեգակը,
Հա, ճաղկեցաւ մանուշակը.
Մեղսն թողեց իր տնակը
Տըզտըզալով, տըզտըզալով։

Մեղսն թըռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղը առաւ քաղցր, անուշիկ.
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ
Պըզըզալով, պըզըզալով։



պապ, տատ. հայր, մայր. տղա, աղջիկ. հարս, փեսա.

Խ Ն Ա Մ Ա Խ Ո Ա.

«Եկել եմ, եկել, այ խնամի»։
—Ի՞նչ ես եկել, այ խնամի։
«Աղջիկդ ազիլ, այ խնամի»։
—Աղջիկ չունիմ, այ խնամի։
«Ես տեսել եմ, այ խնամի»։
—Ո՞րտեղ ես տեսել, այ խնամի։
«Խանի այգում, այ խնամի»։
—Ի՞նչ էր անում, այ խնամի։
«Գլուխն էր կոկոմ, այ խնամի»։
—Ի՞նչով կոկոմ, այ խնամի։
«Հայլով, սանրով, այ խնամի»։
—Հայլին մնցն էր, այ խնամի։
«Հայլին հայլեվարի էր,
Սանրը սանրավարի էր»։

Հ Ա Ր Ո Յ
Մ
Վ Ե Ս Ա

ճօճ



Մանուկը քնած է ճօճի մէջ. մանուկի ճակատը բաց է. ճանձերը կծռմ են երեխային: Երեխայի ճակատը ծածկում են խասով:


Փայտոն

Ճօճի մօտ դրած է մի ֆայտօն—փոքրիկ, մանկական ֆայտօն: Մանուկը կը զարթնի. Նրան կը դնեն ֆայտօնի մէջ, կարմիր ֆէսը կը ծածկեն զլիսին եւ ֆայտօնը կը քաշեն դէպի տռն:



Փոքրիկ ճանձ եմ զարձասէր,
Միշտ թռչում եմ վար ու վեր,
Մի հով տան մէջ, մի բակում,
Սաստիկ արեի տաքում:
Ես ներկայով բաւական,
Միտք չեմ բերում ապագան:

Եղբայր



Լսում ես՝ քոյր, թոյլ, ծոյլ, բոյս, բոյն, լոյս.
Գրի՞ր՝ քոյր, թոյլ, ծոյլ, բոյս, բոյն, լոյս.
Քոյրն ասաց՝ եղբայր ոնիմ. Եղբայրն ասաց՝ քոյր չոնիմ:

Քոյր ու եղբայր իջան պարտէզ՝ խաղ անելու. Եղբայրը պլտ-տացնում էր հոլը. Ծոյրը խաղում էր տիկնիկով:

«Դու ինձ խանգարում ես, Սաթօ, հոլիս առաջն ես ընկնում», ասաց եղբայրը:


— Դու ես ինձ խանգարում. մտրակիդ ծայրով, դիպչում ես տիկնիկիս. քաշովը այն կողմը:

Մանուկները հեռացան իրարից. Նրանք սկսեցին ջոկ-ջոկ խաղ-անել, բայց շոտով տըխրեցին ու յետ դարձան տռն:

Ի՞նչո՞ւ տիրեցին մանուկները.

ու - ու

ձու, կատու, մեղու, տիրացու, բաքու...




կ ա տ ո ւ

Կատուն եկաւ, փիսի՛կ, փիսի՛կ,
Հազար նազով, ինչպէս հարսիկ.
Դունչը սրբեց թաթիկներով,
Մագը սանրեց շանչիկներով։
— Կատու, կատու, էր ես տրտում,
Թէ՞ մըկներն են այսօր արթուն։
Կատուն ասաց՝ միած, միած։
Այսինքն թէ՞ այն, այն։

ու միշտ կարդա օվ

ով եկաւ, ով գնաց, ով ասաց, ով լսեց...

Ո ր բ ը



Կարմիր արեւը արդին մայր մըտաւ,
Լուսինը վաղուց գնաց, թաք կացաւ.
Մանրիկ աստղերը ամպի տակ մըտան
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան։
Անտէր, անպաշտպան, տկլոր ու քաղցած,
Որին աղօթում էր խաչքարի առաջ։

եւ գ ր ի ր և

արեւ — արեւ, տերեւ, բարեւ, անձրեւ, պարզեւ...

Խաչքարի առաջ
կանգնած է մի աղ-
ջիկ. որբ է այդ աղ-
ջիկը, հայր ու մայր
չունի. ոտաբորիկ է
նա, ոտնաման չու-
նի. պատառուած
են շորերը, նոր հա-
լաւ չունի։

Որբը աղօթք է
անում, որ մի բարի
մարդընդունի իրան,
պահի, պահպանի։

Ա ն ձ ր և

Անձրև, անձրև, ցած արի,
Բըսցրու ցորեն ու գարի,
Բըսցրու ցորեն, կանաչ խոտ,
Աւլէ փոշի, մաքրէ օդ:

իւլ կ ա ր դ ա շ ինլ *)

իւղ—իուղ, հիւր—հիուր, ալիւր, աղբիւր...



Առիւծն ու մուկը

Մուկը բուն էր շինել առիւծի որջի մօտ
և նրա մէջ ապրում էր: Այդ բանը դուր չէր
գալիս առիւծին. նա ուզում էր մկանը ջարդել:
—Ինձ մի՛ ջարդիր, տէր, թող ապրեմ քեզ
մօտ. ձեռքիցս եկած լաւութիւնը կանեմ քեզ,
ասում է մուկը:

Առիւծը ժպտում է. «Ի՞նչ լաւութիւն կարող
է անել ինձ այս ողորմելին», մտածում է նա:

*) Սրմատական բաղաձայնից առաջ միայն:

Մարդիկ թակարդ են սարքում և առիւծին
բոնում են: Թակարդի հաստ թոկերը պինդ
սեղմում են նրան: Առիւծն սկսում է մոնչալ:
Մուկը լսում է առիւծի մոնչոցը, մօտ է վա-
զում, իւր սուր ատամներով կրծոտում-կտրատում
է թոկերը և ազատում է առիւծին:

Մ ե ղ ո ւ




Ամենայն օր ես գնում եմ դաշտ,
Ամենայն օր ես գնում եմ ձոր,
Գնում եմ գարնանը,
Գնում եմ ամառ.
Ես անվերջ աշխատում եմ.
Ծաղիկների մէջ մեղր եմ պտռում.
Գտածս իսկոյն ուղղակի փեթակ եմ
տանում.

Որ-երբ ցուրտ քամին փչէ,
Երբ ծաղիկները թառամին,
Ես ձմեռը պաշար ունենամ,
Բոլորովին ապահով լինիմ:

Գարուն, ամառ, ամեն օր
ես գնում եմ դաշտ ու ձոր,
Աշխատում եմ ես անվերջ,
Մեղր եմ պրտում ծաղկանց մէջ
եւ գտածըս ես շիտակ
իսկոյն տանում եմ փեթակ,

Որ երբ փչէ ցուրտ քամին,
ծաղիկները թառամին,
ես ձմեռը պաշարով
կինիմ իսպառ ապահով։




Ժ ա Մ

Ժամ, ժամաւոր, ժամասէր, ժամկոչ.
Ժամ, ժամագործ, ժամանակ, ժամացոյց.

Ժամի դռան դողլողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նըրա հանդերձ պատառ-պատառ,
Չունի շապիկ իւր հագին։

Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անց-կացողին՝
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէք աղքատին»։



Յ ո պ ո պ

հարկ—տուրք, պէտք.	յամառ—կամակոր.
յարկ—կտուր, ծածկ.	յիսուն—ուստ զաւարած
հարթ—տափակ, տափարակ.	հիւսն—
յարդ—ծղոտ, դարման.	հոտ—
համր—մունջ, լալիկ.	յօդ—
յամբ—դանդաղ, կամաց.	հօտ—
համար—մի բանի համար.	

Յ ո պ ո պ լ

Յոպոպը ձու պիտի ածէր, որ ձագեր հանէր,
բայց բուն շինել չըգիտէր։ Նա մի պատրաստի
բուն գտաւ, ձու ածեց, որ թուխս նստի։ Միւս
օրը յոպոպն զզաց, որ բունը հոտում է. զնաց,
ուրիշ բուն գտաւ։ Հատ չանցած, այդ բնից էլ
սկսեց վատ հոտ գալ։

— Այստեղի թոշունները, երեխ, հոտած են,
ասաց յոպոպը, թոշեմ-զնամ ուրիշ աշխարհ։

— Գնա, ասաց ազռաւը. բայց աշխատիր
ընութիւնդ փոխել, ոչ թէ բունդ. կեղտահոտը
նրանից է, որ դու մաքրասէր չես։

ձու ածել—հաւը ձու է ածում.

ջուր ածել, թէյ ածել, սուրճ ածել,
փող ածել, սրինդ ածել, դաշնակ ածել.
հանել, որ հանէ, որ հանէր.
նստիլ, որ նստի, որ նստէր.

Զայնաւոր տառեր՝ ա, օ, ու, է, ի, ը, ե, իւ, եօ, եա.

Կիսաձայն յ՝—այ, էյ, օյ, վայ, թէյ.

» » հայը, մայը, եղբայը.

» » քույր-քոյր, ծոյլ, բոյն.

Բաղաձայն յ՝ յարկ, յիսուն, յետոյ.

Անձայն յ՝ ծառայ, քահանայ, երեկոյ.

իւ — ուէ — ուե — ուա.

ալիւր. արիւն. աղբիւր. աղուէս. պատուէր. արուեստ.
ստուեր. առուակ.

Ես շատ եմ սիրում, երբ ձիւն է գալիս, տաք հագ-
նըւում եմ, բակն եմ վազ տալիս, ընկերներիս հետ ձնա-
գունտ խաղում, ազատ թռչկոտում, խնդում, ծիծաղում.
բայց, ախ, աշխարհում կան բիւր մահուկներ, որոնք
բոբիկ են, չունին տաք շորեր։



Ա զ ու է ս լ

Աղուէսը պառկեց աղբի տակին,
Աչքը գցեց հաւի ձագին,
Նետով կրտամ աչքի տակին,
Որ մօտ չըգայ նա մեր բակին։

եա. եօ.

Հոգի—հոգեակ։ որդի—որդեակ. աղաւնեակ, եօթնեակ...

Արուսեակը շատ աշխատասէր աղջիկ էր. իրանց դա-
ստանը նա ունէր եօթը ընկերուհի. նրանց անուններն
էին՝ Սրբուհի Մամիկոնեան, Սաթենիկ Արամեան, Վար-
դուհի Պարոնեան, Պերճանուշ Պուշեան, Մանուշակ Պատ-
կանեան, Սիրանոյշ Աղայեան, Լուսիկ Արծրունի. Իսկ
Արուսեակի ազգանունը Ղեղնդեան էր։

ԱՄԲՈՂՋ ԱՅԲՈՒԲԵՆԸ

ա, բ, զ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, իս, ծ, կ,
հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, շ, պ, ջ, ռ, ս, փ,
տ, ր, ց, ւ, փ, ք, ու, օ, ֆ.

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Խ, Ը, Թ, Ժ, Ի, Լ, ԻՍ, Ծ, Կ, Հ,
Հ, Ճ, Շ, Յ, Ռ, Զ, Ջ, Ռ, Պ, Գ, Ջ, Ռ, Ծ, Ի, Ռ,
Փ, Ք, Օ, Ֆ.

Ամբողջ այբուբեն

ա, բ, զ, դ, ե, չ, պ, թ, ի, լ, իս, ծ, կ, հ, չ,

դ, ե, լ, չ, ս, յ, ն, շ, պ, զ, ու, ա, վ, պ, ր, ց, ւ,

փ, ժ, մ, օ, ժ ժ ժ ժ

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Խ, Ը, Թ, Ժ, Ի, Լ, ԻՍ, Ծ, Կ,

Փ, Ժ, Կ, Ե, Զ, Ը, Խ, Ը, Վ, Ա, Յ, Ե, Ը, Պ,

Չ, Թ, Ջ, Ռ, Ա, Ե, Ա, Ր, Ե, Ւ, Ե, Ռ, Ջ,

Ժ, Թ, Ջ, Ռ, Ա, Ե, Ա, Ր, Ե, Ւ, Ե, Ռ, Ջ.

Լ, Ե, Ը, Վ, Գ, Գ, Ե, Ե, Ա, Ա, Գ, Ր, Ա, Ա, Վ, Վ,

Բ, Ա, Ա, Վ, Վ,

Լ, Վ, Վ,

Լ, Լ,

Ե, Ե,

Զ, Զ,

Վ, Վ,

Խ, Խ,

Չ, Չ,

Դ, Դ,

Ա, Ա,

Վ, Վ,

у. у. ё. ю. ю. ю. ю. ю. ю. ю. ю.
ssn. n. ю. ю. ю. ю. ю. ю. ю. ю.
ffh. h. h. h. h. h. h. h.
ж. ж. ж. ж. ж. ж. ж. ж.
и. и. и. и. и. и. и. и.
и. и. и. и. и. и. и. и.
2. 2. 2. 2. 2. 2. 2. 2. 2. 2.
ff. r. u. l. n. f. n. r. r. r. r.
r. n. d. n. d. n. d. n. d. n. d.
з. р. т. ю. ю. ю. ю. ю. ю. ю.
оз. б.
и.
и. и. и. и. и. и. и. и. и. и.

и. и. и. и. и. и. и. и. и. и.
/ / / / / / / / / / / /
f. a. b. b. f. f. f. f. f. f. f.
f. f. f. f. f. f. f. f. f. f.
f. f. f. f. f. f. f. f. f. f.
f. v. f. v. f. v. f. v. f. v. f. v.
h.
з.
f.
з.
9. 9. 9. 9. 9. 9. 9. 9. 9. 9.
7. 7. 7. 7. 7. 7. 7. 7. 7. 7.
6. 6. 6. 6. 6. 6. 6. 6. 6. 6.

II. ՏԱՐՐԱԿ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Սուարկայի մէկը և շատը

մէկ, երկու, երեք ծառ—ծառեր.

մէկ, երկու, երեք մոմ—մոմեր.

մէկ, երկու, երեք ձի—ձիեր.


մէկ, երկու, երեք սեխ—սեխեր.

մէկ պապ. մէկ պապ էր. շատ պապ եր.

մէկ տատ. մէկ տատ էր. շատ տատ եր.

մէկ հաց. մէկ հաց էր. շատ հաց եր.

մէկ ձու. մէկ ձու էր, շատ ձու եր.



2. Սագեր

ԶՌ-ՉՌ, շատակեր


սև ու սպիտակ իմ ձագեր,

հերիք որչափ լողացաք,

կարմիր տօտեր լրւացաք.

մի՞ ամեց հերիք, որչափ զետի մօտ
սին միմադի որդեր կերաք դուք տղմոտ.
գնանք-գնանք դէպի տուն.
ամ չին զոյ զի լուսավ ժամանակ առաջ մաս չին
ոչի չ մկան ժամանակ առաջ մաս չին
ոչ մզմին 3. Սուարկայի մէկը և շատը

շուն, շուն էր, շուներ—շ'ներ.
տուն, տուն էր, տուներ—տ'ներ.
ձուկը, ձուկն էր, ձուկներ—ձ'կներ.
դուռն, դուռն էր, դուռներ—դ'ռներ.



4. Ազահ շունը

Կամուրջի տակից պարզ ջուր էր վազում:
Մի շուն անցնում էր կամուրջով: Ճունը բերանին

մի կտոր միս ունէր։ Վերևից նայեց ջրին։ Ջրի
մէջ տեսաւ մի ուրիշ շուն, սա էլ բերանին միս
ունէր։ Ըունը ցած թռաւ կամուրջից. ուզեց
միւս շանից խլել մսի կտորը։ Բայց ջրի մէջ նա
ուրիշ շուն չըգտաւ. իրան բերանի կտորն էլ վէր
պցեց, ջուրը տարաւ։ Ըունը իւր պատկերն էր
տեսել ջրի մէջ։ Աշկածակ էր մեր շունը և պա-
տիմն էլ ստացաւ։

5. Առարկայի մէկը և շատը


մէկ շուշան, մէկ շուշան էր. շատ շուշաններ.
մէկ դանակ, մէկ դանակ էր. շատ դանակներ.
մէկ մկրատ, մէկ մկրատ էր. շատ մկրատներ.
մէկ դպրոց, մէկ դպրոց էր. շատ դպրոցներ.
մէկ աշակերտ, մէկ աշակերտ էր. շատ աշակերտներ։

6. Հաւն ու ցինը

Հաւը ձագերն առաւ և զնաց աղբանոցը
քըցուց անելու։ Այդ ժամին ցինը ման էր տալիս
օդի մէջ։ Մայրը տեսաւ ցինին և ձայն տուեց
ձագուկներին.

Չու-ջու, ջու-ջու, իմ ձագուկներ,
լաւ վառիկներ, աքլարիկներ.

Եկէք, մըտէք թեփս տակը,
շատ հեռու է հայր-որձակը.
չար ուրուրը ման է տալիս,
օյ-օյ, մնց է պտուտ գալիս։



Չագերը հասկացան, որ վտանգ կա, վազե-
ցին, մտան մօր թեփ տակ։ Բայց մի ձագուկ
ականց չարեց մօր ձայնին։ Ցինը վրա-տուեց, ճան-
կերի մէջ առաւ նրան և տարաւ, անուշ արաւ։

Գնաց քջուջ անելու—գնաց որ քջուջ անի.
ման-տալ. ման եմ տալիս. ման էի տալիս.
ման գալ. ման եմ գալիս. ման էի գալիս.
պտուտ-գալ. պտուտ եմ գալիս. պտուտ էի գալիս.
պտուտ-տալ. պտուտ եմ տալիս. պտուտ էի տալիս.
վրա-տալ. վրա եմ տալիս. վրա-տուեց ձագին.
ճանկեր. ձագեր. ձագուկներ. վառիկներ...

7. Առարկայի մէկը և շատը

մի մատանի, շատ մատանիք, շատ մատանին եր.
մի աղաւնի, շատ աղաւնիք, շատ աղաւնին եր.
մի քահանա, շատ քահանայք, շատ քահանան եր.
մի երեխա, շատ երեխայք, շատ երեխան եր.

8. Կաղնի ծառը և եղէզը

Անտառի մօտ մենակ կանգնած էր մի հսկա
կաղնի։ Ծառին մօտիկ դուրս էր եկած մի հա-



մեստ եղէզնի։ Կաղնի ծառը շարունակ ծաղ-
րում էր եղէզնուն. դու անզօր ես, ասում էր.
Քամին քեզ կռացնում, գետնին է կողցնում. իսկ
ես միշտ կանգնած եմ ուղիղ և քամուց չեմ
վախենում։

Մի օր էլ սաստիկ քամի վեր - կացաւ։

Եղէզնին ծալուեց, գետնիցը կպաւ. իսկ կաղնին
արմատից պոկուեց, վայր-ընկաւ։ Քամին անց-
կացաւ։ Եղէզնին նորից կանգնեց, նայեց կաղ-
նուն ու ասաց. «Ո՞վ հպարտանա, նա թող չքանա»։

կանգնած էր.

Բնչը. մի կաղնի կանգնած էր.

Բնչպիսի. մի հսկա կաղնի կանգնած էր.

Որտեղ. անտառի մօտ մի հսկա կաղնի կանգնած էր.

Բնչպէս. անտառի մօտ մի հսկա կաղնի մենակ կան-
գնած էր։

դուրս էր եկած.

Բնչը. դուրս էր եկած մի եղէզնի.

Բնչպիսի. դուրս էր եկած մի համեստ եղէզնի.

Որտեղ. ծառին մօտիկ դուրս էր եկած մի համեստ
եղէզնի։

ծաղրում էր.

Բնչը. ծառը ծաղրում էր.

Որ ծառը. կաղնի ծառը ծաղրում էր.

Բնչպէս. կաղնի ծառը շարունակ ծաղրում էր.


Բնչին. կաղնի ծառը շարունակ ծաղրում էր եղէզնուն*):

կաղնի, կաղնու, կաղնուն, կաղնուց. կաղնիք-կաղնիներ.
Եղէզնի, եղէզնու, եղէզնուն, եղէզնուց, եղէզնիք-եղէզնիներ.
Քամի, քամու, քամուն, քամուց, քամիք-քամիներ.

*) Այսպէս հարցերով վերլուծել բոլոր նախադասութիւնները.
հարցերը տալ ընդարձակ և պատասխանները պահանջել լիակա-
տար և ոչ հատիկ-հատիկ բառերով։


9. Բառ. խօսք
բառ՝ հաց. ջուր. գիրք. հոլ. մատիտ. տիկնիկ...
խօսք՝ հացը. ուտելիք է. ջուրը խմելիք է.
հոլը խաղալիք է. գիրքը դասական առարկայ է.
մատիտը... տիկնիկը... սուրճը... փլաւը...

աշակերտ. ուսուցիչ. դերձակ. երկրագործ.



Աշակերտը կարգում է. ուսուցիչը
կարգացնում է:
Դերձակը կարում է. երկրագործը
վարում է:


կով. ձի. շուն. կատու. առիւծ...



Կովը բառաչում է. առիւծը
մոնչում է:


Զին խրխընջում է. շունը հաջում է:

Կատուն մլաւում է. աքաղաղը կանչում է:




10. Աքաղաղ

Դու ինձ ասա, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ,
Ինչի՞ն շուտ արթնանում,
Բարձր-բարձր երգ ասում,
Անուշ քունս խանգարում:



ոչխար. առիւծ. սոխակ. խոզ.
ոչխարը խոտակեր կենդանի է.
առիւծը մսակեր գաղան է.
Խոզը ամենակեր կենդանի է:




11. Գայլը և գառը

Սարի լանջով առուակ էր վագում: Գառը մօտեցաւ, որ ջուր խմէ: Գայլը տեսաւ վերևից և ձայն տուաւ. «ԵՇ, դնէ, ինչո՞ւ ես ջուրս պղտորում»:

—Ես ներքեն եմ կանգնած, տէր իմ, իսկ դու վերևն ես. ի՞նչպէս կարող եմ ջուրդ պղտորել:

«Ուրեմն ես սովոր եմ ասում, բարկացաւ գայլը. անպիտան, դու համարձակւում ես ինձ հակաճառել», ասաց գաղանը և պատառուեց գառնուկին:



12. Երկու առարկայ մի խօսքի մէջ

Հովտում կանգնած էր մի տանձի ծառ։
Ծառի վրա կային պտուղներ։
Ծառի տակ նստած էր հովիւր։
Գառների մօտ նստած էր շունը։
Ծառի շուրջը արածում էին գառներ։
Ծառի վերևը թռչոտում էին թռչուններ։
Ոստի վրա նստած էր մի ազուր։

13. և — ու

Ես գնում եմ դպրոց։
Դու գնում ես դպրոց։
Ես և դու գնում ենք դպրոց։
Ես ու դու գնում ենք դպրոց։

14. Գառնուկ

Իմ սիրուն գառնուկ,
իմ անմեղ գառնուկ,
բուրդը սպիտակ է.
բուրդը փափուկ է.
դու դաշտ ես վազում.
դու արօտ ես վազում.
մօրըդ կարօտն ես քաշում։
Սիրական գառնուկ,
լաց մի լինիր փոքրիկ տղի նման.
մայրըդ կըգայ,
քեզ համար անուշ կաթ շատ կըբերէ։

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդը սպիտակ ու փափուկ,
Գաշտ վազելով ու արօտ,
Մօրըդ քաշում ես կարօտ։
Մի լար, գառնուկ սիրեկան,
Փոքրիկ տղի դու նման.
Կըգայ մայրըդ, հետը շատ
Կըբերէ քեզ անուշ կաթ։

15. Իսկ. բայց.

Վարդանը գնում է, իսկ Շուշանիկը գալիս է:
Հայկը գրում է, իսկ Հայկանուշը կարում է:
Ծառը ծաղկում է, բայց պտուղ չի տալիս:
Սրմիկը նկարում է, բայց վատ է նկարում:

16. թէ - եթէ.

Կատուն մեռաւ, ափսօն ու ախ,
Մկներն այսօր խստ են ուրախ.
Եթէ յանկարծ վեր-կենայ սաղ,
Նրանց կանէ արիւն-շաղաղ:



17. Վատ ընկեր

Էշն ու շունը ճանապարհ էին գնում: Մի
խոտաւէտ տեղ կանգնեցին: Էշն սկսեց արածել
խոտը. շունը ուտելու բան շունէր:

«Խուրմինդ լիքն է հացով. մի կտոր ինձ
տուր,—խնդրեց շունը,—սոված մեռնում եմ»:
— 2եմ տալ. ես խոտ եմ ուտում, դու էլ
խոտ կեր,—պատասխանեց էշը:
«Ես խոտակեր չեմ, ընկեր. հաց եմ ուզում»:
— 2եմ տալ,—կրկնեց էշը:

Այդ միջոցին թփերի ետևից երևեցաւ գայլը,
էշի թշնամին:

Էշը զարհուրեց. «Ընկերս, աղաչեց նա. առ,
քեզ լինի բոլոր հացը, կեր, անուշ արա. միայն
թէ աղատիր ինձ գայլի ատամներից»:

Ճունը երեսը շուռ տուեց և հեռացաւ. «Եթէ
իմ ընկերս լինէիր, ես քեզ կըպաշտպանէի»,
ասաց նա:

Գայլը մի րոպէում պատառուեց էշին:

արածել—արածացնել. ուտել—ուտացնել.
խոտաւէտ, հոտաւէտ—շատ խոտ տուող, լաւ հոտ տուող:
սոված եմ, ծարաւ եմ—քաղցած եմ, խմել եմ ուզում.



III. ԸՆԹԵՐՑԱՐԱՆ



1. ՄԵՐ ԹՈՒՆԸ

Մեր տունը մեծ չէ. նա երեք սենեակ ունի և մի խոհանոց։ Սենեակներից մէկում մենք դաս ենք սովորում. երկրորդ սենեակում ճաշում ենք. նրա մէջ դարսած են շատ աթոռներ, մի մեծ սեղան և մի պահարան։ Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք։ Դա կոչում է ննջարան։

Պատմեցէք, ինչ որ տեսնում էք մանկանոցում։

2. Գրեցէք հետևեալ շինութիւնների անունները և յիշեցէք՝ տուն, դպրոց, եկեղեցի, ջաղաց, գոմ...

3. ՄԵՐ ԴԱՍԱՌՈՒՆԸ

Դասատան մէջ նստած են աշակերտներ։ Աշակերտների առաջ նստած է վարժապետը։ Վարժապետը սովորեցնում է։ Աշակերտները սովորում են։ Երբ-որ վարժապետը ներս է մըտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են։ Աշակերտները դասատանը կարդում են, գրում են, հաշում են թրւերով, երբեմն էլ նկարում են։ Աշակերտների դիմացը դրած է մի մեծ գրատախտակ։ Գրատախտակի մօտ դրած է կաւիճ և սպունգ։ Գրասեղանների վրա դրած են դասական առարկաներ։

Համեմատեէցք այստեղ նկարագրածը ձեր դասատան հետ։

4. ՀՐԱԼԷՐ

Զանգը աըւին, դէհ, շնւռ արէք,
Խաղալիքներ մի կողմ դրէք.

Մի կողմ դրէք գընդակ, չըւան,
Խաղատիկին, հոլ, խարազան։

Մըտէք, մըտէք դուք դասատուն։

Իսկոյն կըգայ ձեր դասատուն։

5. Մեր ընտանիքը

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր
ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում:
Ես երկու քոյր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողներս
նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ
կերակրում են: Նրանք մեզ պահում-պահպահում
են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և
նրանց պատուէրները կատարում ենք:

6. Ազգակիցներ

Ես ունիմ հայր ու մայր. Նրանք իմ ծնողներն են:
Հօրս հայրը իմ պապն է—իմ մեծ հայրը:
Մօրս մայրը իմ տատն է—իմ մեծ մայրը:

Հայրս մի եղբայր ունի. Նա իմ հէրբարն է.—
հէրբար-հօրեղբայր: Մայրս էլ մի եղբայր ունի. Նա
իմ քեռին է.—քեռի-մօրեղբայր: Ունիմ էլի երկու
հօրաքոյր-հօրքիր և մի մօրաքոյր-մօրքիր:



8. Դասական պիտոյքներ՝ գիրք, գրիչ, գրչակոթ, գրչա-
ծայր, գրչաման, գրչահատ, քարեգրիչ, քարետախտակ,
գրատախտակ, կաւիճ, մատիտ, տետրակ, թանաք,
թանաքաման:

Խաղաղիքներ՝ վէգ, հոլ, գնդակ, օղակ, չըւան, խարազան,
չիփկ, չիլիկափայտ, խաղատիկին—տիկնիկ...

Լուսացաւ, լուսացաւ,
Լոյսն է բարին,
Ծիտն է ծառին,
Հաւն է թառին.

Աշխատաւնը, վեր կաց բանի,
Ծոյլ մարդու քունը տանի:

Յերեկ, գիշեր, առաւօտ, կէսօր, երեկոյ, կէսգիշեր—օրուայ
մասերն են:

9. Գիրք, մէջը քաղցր միրգ:

Ինչոք գրուեցաւ գրիչով, չի հանուիլ բահով, բրիչով:
Մատիտը մատիդ, կօշիկը ոտիդ, ճանպա երթալիս
միշտ լինին մօտիդ:
Հուլը կուզէ խարազան, որ պտոյտ գայ անխափան:
Վէդի կարմիրն է սիրուն, վաստակ է զարկողներուն:
Օդակ խաղան օգտակար շարժմունք է մանկանց համար:

10. Կարդա

Կարդա, այ իմ խելօք մանուկ,
Կարդա, զրիր դու ամեն օր.
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր:

11. Առածները տնօղիր սովորեցէք եւ գրեցէք

Ո՞վ կը կարդայ, նա մարդ ա:
Ո՞վ կ'աշխատի, նա կ'ուտի:
Ո՞վ ալարի, ոչ դալարի:

12. Վեր կաց

Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,
Սրեն արդին ծագել է.
Վեր կաց փափուկ քո անկողնից,
Հաւը վաղուց խօսել է:



13. Աշակերտը

Արամի ծխական դպրոցի աշակերտ
էր: Երեկոյին նա պատրաստեց իւր զա-
սերը, գրքերն ու տետրախները դարսեց
պայուսակի մէջ և անկողին մտաւ:

Առաւտեան ժամի եօթն էր: Մայրը
մօտ գնաց Արամի անկողնին, մեղմիկ
համբուրեց նրա գանգուր մազերը և կամացուկ
խօսեց. «Արամիկ, զաւակս, վեր կաց, ժամանակ է»:

Մանուկը արագ վեր կացաւ, լուսուեց, հագ-
նուեց, մի բաժակ թէյ խմեց, մի փոքրիկ հացիկ
կերաւ և շտապ գնաց ուսումնարան:

14. Գրիչ


Ի՞նչ կը լինի, ասա, գրիչ,
Ինձ էլ սիրես գոնէ մի-քիչ.
Ինչու իմ մեծ քրոջ ձեռքին,
Քրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խազմըզում ես
Սև ագուաւի չանկերի պէս:
Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել:
Ե՛կ, խնդրում եմ, ինձ համար էլ
Գրիր այնպէս արագ-արագ,
Այնպէս ուղիղ, սիրուն, բարակ:

Գրիչը լուռ լսում-լսում,
Ճըռճըռում է ու խազմըզում.
Բայց այս անգամ արդէն, կարծես,
Փոքրիկ ծտի ճանկերի պէս:

16. Բացատրեցէք հետեւեալ հանելողակերը եւ գրեցէք՝

1. Գլուխս կտրեցին, սրտիկս հանեցին, գինի խմացին, լեզուս բացուեցաւ, խօսիլ ըսկաւ:

2. Քանի որ ծեծը կ'ուտէր, ուրախութեամբ կըպաշտէր.
Երբ-որ ծեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ:



17. Ուտելիք եւ խմելիք

Ի՞նչ ենք ուտում՝ հաց, պանիր, սպաս, փլաւ, չիրթմայ,
տոլմայ, կոլողակ, գիշերեփուկ...
Ի՞նչ ենք խմում՝ ջուր, կաթ, թէյ, սուրճ, գինի, գարեջուր...
Խմորեղէն ուտելիք՝ բոքոն (բոկեղ), լաւաշ, բաղարջ, կաթ-
նահունց, գաթայ, կարկանդակ, կուտապ...
Կաթնեղէն՝ մածուն, սեր, թան, կարագ, շօր*), իւղ, պանիր...
Մսեղէն՝ արգանակ—բուլիօն, սպաս—սուպ, խորոված,
տապակած...

*.) Շօր—творогъ.



18. ԱՄԵՆԾՐՈՒՄՑ ՀԱՅԸ

Մեր Հայր, որ եր-
կնքումն ես, սուրբ լինի
Քո անունը, զայ Քո թա-
գաւորութիւնը. լինի Քո
կամքը ինչպէս երկնքումը,
այնպէս էլ երկրի վրայ.
մեր ամենօրեայ հացը
տուր մեզ այսօր...


19. Առածներ՝

Աղ ու հաց, սիրաը բաց:
Հաց ու պանիր, կեր ու բանիր:
Մի բաժակ ջուր, ով ուզի՝ տուր:
Հացի կտրածը թուրը չի կտրիլ:

20. Բարի մարդը

Երիկը շուկայից տուն էր գալիս: Ճանապարհին
նա տեսաւ մի մանուկ, որ աղի-աղի լալիս էր:
Մարդը խղճաց որբուկին, առաւ, իւր տուն տարաւ:
Կինն ասաց. այ մարդ, ի՞նչ ես անում. այդ
որբն էլ որ մեր տուն մտաւ, մեր հացին աղ չի
մնալ:

Մենք էլ հացը առանց աղի կուտենք, պատասխանեց բարի մարդը:



21. Արլորն ու մարգարիտը

Օրուան մէկը մի աքլոր,
Քջուշ-մջուշ անելիս,
Տեսաւ մի հատ մարգարիտ,
Աղբի մէջը փայլելիս.
Կտցեց, ասաւ՝ էս ի՞նչ է.
Ինձ հարցընես՝ ոչինչ է.
Այ վայը տամ էն մարդին,
Որ գին կըտայ էս զարդին.
Իսկ ինձ համար մի գարին
Արժէ էսպէս հազարին,



22. Հ ա ց
Մարդուս գլխաւոր
ուտելիքը հացն է: Հացը
պատրաստում են ալիւ-
րից. առաջ ալիւրը մա-
զում են, յետոյ տաք ջրով
շաղախում, խմոր են շի-
նում: Խմորը շաղախե-
լիս՝ հետը թրթ - խմոր
են խառնում: Թրթ-խմորին ասում են խաշ:
Շաղախած խմորը լաւ հունցում են և ծածկում:
Հունցած խմորը քիչ-քիչ քացախում է տաշտի
մէջ՝ գալիս է: Տանտիկինը վերցնում է եկած
խմորը, գնդում է և այդ գնդերից հաց է թխում
թռնրի կամ հնոցի մէջ: Հնոցին փուռն են
ասում:

23. Զ ո ւ ր

Զուրը մարդիկ չեն պատրաստում. Նա այն-
քան հարկաւոր է, որ Սատուած ինքը առատու-
թեամբ բաշխում է հարուստին էլ, աղքատին էլ:
Մարդիկ խմելու ջուրը վեր են առնում աղբիւր-
ներից և գետերից: Ուր-որ աղբիւր կամ գետ

շըկայ, մարդիկ գետինը խոր քանդում են, զըր-
հոր են շինում և այդ ջրհորի ջուրն են խմում։
Առանց ջրի մարդս չի կարող ապրել. կենդանի-
ներն էլ կը կոտորուին, եթէ ջուր չըլինի։

24. Ի՞նչպիսի է առարկան, որացրէք եռ կրկնեցք շա-
տացրած.

Մանուկը ուտում է... հաց... գաթայ... բաղարջ...
մածուն... փլու...

Մանուկը խմում է... ջուր... կաթը... թէյ... սուրճ...

Մանուկը գնեց... թուղթ... գրիչ... գիրք... գնդակ...

Մենք ուտում ենք...
Դուք խմում էք...
Նրանք գնեցին...



25. Ն ա պ ա ս տ ա կ

Մի վազիր այդչափ արագ,
Ի՞մ սիրունիկ նապաստակ,
Շատ պստիկ ես տակաւին,
Թաթիկներդ կըյոգնին։

Քեզ կըքերեմ կաթն ու հաց,
Շաքրեցով համեմած,

Պատես, խմես, զօրանաս,
Բանից կարօտ չըմնաս։

Ծանր-ծանր կըքայլես,
Սիրուս վեր-վեր կըհանես.
Կ'արձակեմ քեզ, երբ ուզես,
Կ'երթաս, ազատ կ'արածես։

Ինչպիսի և ինչպէս բառերը զանազանեցէք.

Ի՞նչպիսի նապաստակ...
Ի՞նչպէս մի վազիր...
Ի՞նչպիսի կաթն ու հաց...
Ի՞նչպէս կըքայլես...

—

26. Հանելուկաները ուացատրեցէք եռ գրնցէք՝

1. Ճերմակ տակառիկ,
Մէջն երկու կերպ ըմպելիք։

2. Օրան-օրան շուռ է գալիս,
Ոտներ չունի, ման է գալիս,
Բերան չունի, կուլ է տալիս։

27. Կ ա տ ո ւ ի խ ր ա տ ը

Որսի շունը մի նապաստակ էր բոնել։ Կա-
տուն տեսաւ և ասաց՝ ի՞նչ անգութն ես. մեղք
է, բաց թող։

Այդ միջոցին մի փոքրիկ մուկը անցաւ նրանց
մօտից. Կատուն վրայ վազեց, բոնեց, խեղդեց։


— Այդ ինչ արիր, ասաց շունը. մեղք գործեցիր, բարեկամ:

— Ոչինչ, պատասխանեց կատուն. իմ խեղդում մի չնչին մուկն էր միայն:

28. Բառից խօսք կազմեցէք՝

Հացը ուտելիք է:
Հացի կտրածը թուրը չի կտրիլ:
Աչքդ ուրիշի հացին մի՛ գցիր:
Հացից գուրկ մարդուն արա օգնութիւն:
Հացով առատ լինի սեղանդ:
Հացում սննդարար ոյժ կայ:

Այսպէս փոփոխեցէք՝ աղ, ջուր, պանիր...



29. Գոյսիք և սարք

Գործ, գործել, գործող, գործի, գործիք՝ գործ, գանակ, պատառաքաղ, քորոց, մկրատ, ասեղ...

Երկիր, երկրագործ, երկրագործի գործիք՝ գործան, արօր, ցաքան, եղան, մանդաղ, գերանդի...

Դեղձակի գործիք՝ ասեղ, քորոց, մկրատ, մատնոց, արդուկ...

Դարձնի գործիք՝ մուրճ, սալ, ունելիք, կուան...

Հիանի գործիք՝ ուրագ, կացին, սղոց, դուր...

Սարք՝ կապ, սանձ, երասան, թամբ, ասպանդակ, խամուտ, փորքաշ...

30. Համելուկներ՝

1. Տապանը փայտ է, մեռելն երկաթ է, երբ-որ ձայն կըտայ, աշխարհ կը թնդայ:
2. Փտած փայտը փորեցին, ասիւծը մէջը թաղեցին:



31. Ճշմարտախօս Արամը

Հայրը Արամին մի քանի գործիքներ ընծայեց՝ ուրագ, սղոց, դուր, թակ, կացին, մուրճ և այլն: Արամը իրան համար մանրիկ ըաներ էր շինում:

Մի օր Արամը մտաւ պարտէզ և կտրեց մի տանձի ծառ, որ հայրը խնամքով պատուաստել

Էր: Հայրը նկատեց այդ և հարցրեց. «Ով կըլինի կտրած այդ պատուաստը. ես պիտի իմանամ և սաստիկ պատժեմ յանցաւորին»:

—Ինձ պատժիր, հայրիկ, ես եմ յանցաւորը, —ասաց Արամը:

Հօր բարկութիւնն անցաւ. «Դու մեղաւոր ես, Արամ, ասաց Հայրը. բայց որովհետեւ ճշշմարիտ խօսեցիր, ես ներում եմ քեզ. Տես՝ որ միւս անգամ առանց մտածելու գործ չըբռնես»:

32. Ինչով ի՞նչ են անում.

Դանակով կտրում են. ասեղով... ուրագով... սղոցով... արօրով... մանգաղով... գրչով... մատիտով... սկրատով... մուրճով...

33. Ու լեռ

(Հաշոել մեկից միայնու տասը)

Լորենու տակին մէկ ուլ կար կանգնած,
Մենակ մընացած՝ մըկ կում էր կամաց.
Այդ ձայնի վըրայ մօտ վագեց միւսը.
Մէկ ուլի տեղակ եղան երկուսը:

Մի ուրիշ ուլիկ, երբ նրանց տեսաւ,
Կարծեց՝ կուռում են, մօտ վագեց, եկաւ.
Այս մէկի գալով ուլերի թիւը
Երեքի հասաւ: —Ճիշտ է հաշիւը:

Մի չորրորդ ուլիկ, զարմանք էր կ'ասես,
Որտեղից որ էր, պուպուզ, լոյս ընկաւ.
«Ի՞նչ էք երեքով պըռըշկել այդպէս.
Երեքը լաւ չէ. չորս լինինք» —ասաւ:

Մանրիկ այծուկներ չորս չարաձիկ
Պօղ-պօղի տըւին, առան մէկ-մէկի,
Թփերի տակից, նըրանց չխկոցին,
Մինն էլ դուրս վագեց. հինգ եղան կարգին:

Նա որ կենառու էր, նայեց դեպի վեր,
Եւ ժայռի գլխին տեսաւ մի ընկեր.
Այս հօ վեց եղան: —Բա այն խայտառ...
Նրանով եօթ կանի ուլերի հօտը:

Մինն էլ, տես, ինչպէս թըփի մէջ զաղտուկ
Արագ կոծում է ոստերը փափուկ.
Սա էլ որ մօտ գայ ուլերի հօտին,
Բոլորի թիւը կընասնի ութին:

Իսկ այն ի՞նչ ուլ է միւս կողմը կանգնած,
Որբ տղի նըման, կարծես խըռոված.
Արի նըրան էլ հաշուի մէջ առնենք,
Առաջ ութ էին, —իննը թամամենք:

Ահա գալիս է և սէիդ էծը,
Երկար մօրուքով, ամենից մեծը.
Նա հպարտ-հպարտ ուլերն ականեց.
«Ինն են ձագերը, ինձնով՝ տասն», ասեց:

Սէիդ ապէրը դէպի տուն գընաց,
Բոլոր ուլերը իւր ետևն արած:

34. Ե՞րբ է լինում

Չիւնը հալուում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում,
օրը երկարում:—Այս Ե՞րբ է լինում:

Զգալի կերպով շոգը սաստկացաւ. օրը երկարեց,
խոտը հնձուեցաւ. արտերը հասել, մանգաղ են կանչում:
—Ասացէք, տեսնեմ, այս Ե՞րբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այդին քաղեցին. օրը կարճացաւ,
հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է թափ-
ւում և մութ գիշերը չորս կողմդ բռնում:—Ասացէք, խըն-
դրեմ, այս Ե՞րբ է լինում:

Դաշտ ու ձոր, տեսէք, ձիւնով ծածկուեցին. ծառերից
սառցէ շիթեր կախուեցին. մարդիկ ներս մտան իրանց
տները, իսկ գազանները—իրանց բները. դուրսը—օյ, օյ,
օյ—քամի է փչում և ձիւնի փոշին աչքերդ լցնում—Գրեցէք,
խնդրեմ, այս Ե՞րբ է լինում:



35. Արտուտը

Արտուտը բուն էր շինել ցորենի ար-
տում և ձագեր էր հանել: Մի օր արտի տէրը
եկաւ արտը, մի հասկ պոկեց, տրորեց ափի մէջ
և ասաց որդուն. արտը հասել է, որդի. զնա,
խօսիր մեր գրացիներին, թնդ զան, արտը
միասին հնձենք:

Արտուտը մտածեց. քանի որ մարդու յոյսը


գրացիների վրայ է, ես կարող եմ հանգիստ
ապրել այստեղ:

Երկրորդ անգամ արտի տէրն եկաւ, նայեց
հասկերին և ասաց որդուն. գրացիները չեկան.
զնա, որդի, մեր բարեկամներին կանչիր:

Արտուտն ասաց ձագերին. հանգիստ կացէք
ձեր տեղը. արտը շուտով չի հնձուիլ:

Երրորդ անգամ արտի տէրն եկաւ, արտին
նայեց և ասաց. որդի, արտը կծղել է. ուրիշների
վրայ յոյս զնելուց բան չի գուրս գալիս. վաղը
վերցրն մանգաղդ և եկ, արտը հնձենք ես և դու:

Արտուտը մտածեց. այժմ հաւատում եմ, որ
արտը կը հնձուի: Եւ ձագերն առաւ ու հեռացաւ
ուրիշ տեղ:



36. Կարասիք եւ սմաններ

Կարասիք՝ սեղան, աթոռ, բազկաթոռ, գահաւորակ, ընկող-
մարան, օրօրոց, մահճակալ...
Ամաններ՝ կուժ, կուլայ, կճուճ, կարաս, բաժակ, գաւաթ,
ափսէ...

37. Առածներ՝

1. Այ կուժ, քեզ ասեմ, այ կուլա, դու իմացիր:
2. Մի բաժակ ջուր, ով ուզի՝ տուր:

38. Ա թ ո ո

Աթոռը շինում են փայտից: Աթոռն ունի
չորս ոտք, նստատեղ և թիկունք: Նստատեղը
հիւսած է ծզօտից, բայց տախտակից ու փա-
փուկ կտորներից էլ է լինում: Աթոռ շինողին
ատաղձագործ են ասում:

Համամատեցէք սեղանը ամոռի հետ:

39. Գ ա ւ ա թ

Գաւաթը շինում են կաւից: Կաւը բարակ
մաղում են, շաղախում, հունցում և ուզած ձեր
տալիս: Շաղախը ցամաքում է արևի տակ: Ցա-
մաքած գաւաթները դնում են հնոցի մէջ և
սաստիկ կրակ են վառում տակը: Տաքութիւնից
կաւը կարծրանում է: Գաւաթ շինողին բրոտ
են ասում:

40. Համելուկներ՝

1. Չորս եղբայր մի գդակի տակ,
կարծում եմ թէ չ'գտաք:
2. Վերեկց երդիկ, ներքեկց դռնակ,
մէջ-տեղումը ջուր ու կրակ:

41. Սեղանը կարասիք է, իսկ գաւաթը աման է: Կուժը
աման է, իսկ գահաւորակը... Տունը շինութիւն է, իսկ
մահճակալը... Օրօրոցը կարասիք է, իսկ շիշը... Կարկան-
դակը ուտելիք է, իսկ կաթսան... Բազկաթոռը կարասիք է,
իսկ բաժակը... Մարագը շինութիւն է, իսկ ընկողմարանը...

Պատասխանները գրանոր:

42. Տ ա ն ձ ե ր

(Հաշնեցէք տասից միաչեւ մէկը)


Երէկ պալիս հետ այգի գնացինք
եւ տանձի ծառի տակին նըստեցինք:
Այդ տանձի ծառին տասը հատ տանձ կար.
Տասը հատ տանձից մի հատն էր ձիճուառ:
Քամին օրօրեց, ընկաւ այդ մինը.
Մինը որ ընկաւ, մընաց տեղն իննը:

Իննը հատ տանձեր, խոշոր, հիւթալի,
Ոստերի վըրայ դեղնին են տալի:
Պապիս խնդրեցի, որ մէկը ինձ տայ.
Որ մէկը ինձ տայ, ութը կըմնայ:

Երբ ուտում էի պապիս տըւածը՝
«Որդիս հիւանդ է—դուք, ձեր Աստուածը—
Մի հատ ինձ տըւէք», ասաւ մի պառաւ:
Եօթը հատ մընաց, երբ նա էլ առաւ,

— «Քեզ թոյլ եմ տալիս բոլորը քաղես,
Առանց զրկանքի արգար բաժանես»:
Ասաց պապիկս:—Ես կողովն առայ,
կատուի պէս ճարպիկ ծառն իվեր ելայ,
Զգոյշ քաղեցի եօթը հատ տանձը
Եւ ցած սողացի՝ ձեռքիս այդ գանձը:

«ՏԵս, պապիկ, ասի, էս մինը տատին.» 11
 Թող ներող լինի քըչին ուշ շատին.
 Նա է տան մեծը:
 Մնում է վեցը:
 Մին էլ, ի հարկէ, հայրիկիս կըտամ.
 Հին գը կըմնայ կողովում թամամ:
 Սմենից լաւը, մեծը, հասածը
 Ես նրան կըտամ,—սրտիս ուզածը:
 Է՞ն, չորսը մընաց... կաց, քիչ միտք անեմ.
 Չէ՝ դու ասացիր, որ արդար բաժնեմ.
 Սուրէնն ու Շուշան թող մինն ստանան,
 Երկու կէս անեն, ուտեն, լիանան.
 Նրանք փոքրիկ են, կէս-կէս էլ լաւ է:
 Խաչոր, պապի ջան, նրանց այդ բաւ է:
 Մնացած երեք տանձերիցը մին
 Ես պէտք է հանեմ պահողին բաժին՝
 Մեր այգեպանին,
 Ծերուկ Օհանին:
 Ի՞նչ մընաց տակը.
 Հաշուիր շիտակը:
 Երկու հատ մընաց կողովի տակին:
 Մին էլ ես կըտամ իմ լաւիկ պապին...
 Չէ, չէ, մի մերժիր, պապի ջան, վեր առ.
 Ես ուզում էի քեզ երկուսը տալ,
 Բայց... բայց, պապի ջան,
 Տակը մընացած այն մի հատիկը
 Չէ ինձ է արժան:



Կառքեր. սայլակ, սայլ, սահնակ, ֆայէտօն, ֆուրգօն,
 շողեկառք, հանրակառք, ձիաքարշ, ելէքտրաքարշ...
 Նաևը. շողենաւ, առագաստաւոր նաւ, նաւակ, մակոյկ...

44. Հանելուկ.

Զորս եղբայր են շատ նման,
 Զորսն էլ շարժուն գնացկան.
 Փոքրերն առաջ զուգընթաց,
 Գլորւում են սըրտարաց.
 Իսկ մեծերը բարկանում,
 Յետքից վագում, չեն հասնում:

45. Բողից խօսք կազմեցէր

Տուն...	Տանից...
Տան...	Տանով (տնով)...
Տանը...	Տնում (տան մէջ)...



46. ՀԵՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԸՆՔ Է

Քոյր ու եղբայր այգի
գնացին: Եղբայրը խակ պը-
տուղներ էր ուտում: — Մի
ուտիր, ջանիկս, ասում էր
քոյրը. միաս կլտայ, մի ուտիր:
Եղբայրը ականջ չարեց,
խակ պտուղները կերաւ, հի-
ւանդացաւ: Քոյրը նրան անա-
նուխի կաթիլներ խմացրեց,
մանանեխ շաղախեց, փորին
դրեց և ցաւն անց կացաւ:

Ամառն էր. նրանք հանդը գնացին: Եղբայրը վազվեց,
քրտնեց և մօտեցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ:

— Մի խմիր, Պետրոս ջան, աղաչում էր Մարիամը.
սպասիր, հանգստացիր, յետոյ կըխմես:

Պետրոսն ականջ չարեց, սառը ջուրը խմեց, մրսեց և
սկսեց դողացնել: Բժիշկն եկաւ և նրա համար դառը դեղ գրեց:

Զմեռն եկաւ: Մարիամն ու Պետրոսը գնացին գետի
ափը: Զուրը ծածկուած էր բարակ սառուցով: Պետրոսն
սկսեց սղղալ սառուցի վրայ: Մարիամն աղաչում էր.
«Հեռացիր, Պետրոս, դադարիր. սառուցը, տես, չի հաստա-
ցել, չի պնդացել»:

Պետրոսն ականջ չարեց քրոջը... Յանկարծ սառուցը
կոտրուեց և նա ջրի տակն արաւ ու խեղդուեց:

47. ՑՈՐԵՆՆ ՈՒ ԳԱՐԻՆ

Դիւղացին երկու օրավար հող ունէր: Մի օրավարում
նա ցորեն ցանեց, միւսում գարի: Սրտերն աճեցին, բար-
ձրացան, հասկեր գցեցին: Մի օր գարին սկսեց խօսել.

«Ցորեն եղբայր,

ասաց նա. վատ տեղ է
ցանել մեզ մեր տէրը.
այս գիւղը շատ աղքա-
տիկ է՝ ոչ ոսկի ունի,
ոչ արծաթ. ով պէտք
է մեր յարգը ճանաչէ,
մեզ գին տայ. արի,
ցորեն եղբայր, թող-
նենք, հեռանանք այս
գիւղից. արի գնանք
այնտեղ, ուր ոսկի շատ
կայ»:

Ցորենը լսեց դրա-

ցու խօսքերը և ասաց.

«Շատ ափսոսում եմ,

գարի եղբայր, որ

միայն քիստդ ես եր-

կարացրել, խակ խել-

քըդ կարձ է մնացել.

Ինչի՞ մենք ման գանք ոսկու ետեից. մեր արժեքն այնքան
մեծ է, որ ոսկին ինքն-իրան մեր դուռը կըգայ»:

48. անձրե


Անձրե, անձրե, ցած արի,
Բուսցըն ցորեն ու գարի,
Բուսցըն ծաղիկ, կանաչ խոտ,
Աւէ փոշի, մաքրէ օդ.

Դու արի. կամ դու եկ, բուսցըն...
Դու աւէ կամ...
Դու մաքրէ կամ...
Դու ի՞նչ բուսցըն...
Ի՞նչպիսի ծաղիկ, ի՞նչպիսի խոտ...

Պատահանձները գրանոր:

49. չ Ա Յ Ր Մ Ե Ր

Մեր Հայր, որ երկնքամն ես, սարբ լինի Քո
անունը, զայ Քո թագաւորաթիւնը. լինի Քո կամքը
ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրի վրայ. մեր
ամենօրեայ հացը տնկը մեզ այսօր. թնդ մեզ մեր
պարտքը, ինչպէս որ մենք թողում ենք մեր պար-
տապաններինը: Մեզ փորձանքի մի տանիր. այլ
փրկիր մեզ չարից, որովհետև Քոնն է արքայու-
թիւնը և զօրութիւնը և փառքը յաւիտեան:



50. Կ Ե Ն Պ ա ն ի ն ե ր



Չորք-ոտանիք՝ ձի, կով, արջ, փիղ, եղնիկ, գալ...




Թոշուններ՝ հաւ, ծիծեռնակ, արտուտ,
կաքաւ, սիրամարգ...

Զկներ՝ իշխան, տառեխ, գեղարքունի, կարմրախայտ,
օրագուլ, կողակ, կապուտ (լօքո)...

Սողուններ՝ օձ, լոկ, մողէս, կրիայ...

Միջատներ՝ ճանճ, մեղու, մըջիւն, մորեխ, մոծակ...



51. Չուկը

Կարկաչուն գետակի մէջ մի փոքրիկ ձուկն էր ապում. նա սիրուն էր, շատ սիրուն. արեկի տակ երբ լողում էր, ամբողջ մարմնի թեփնւկները փայլում էին ոսկու պէս:

Կարմրախայտն էր դա:

Գեղարքունիք, իմ լաւ ընկեր, ասաց մի օր Կարմրախայտը, արի լողանք մի քիչ հեռու. առաջ գնանք, իջնենք գետը, տեսնենք ի՞նչ կայ այն ջրերում:

—Ինձէլտարէք, ասաց Մուրծան, փոքրիկ բեղերը ցցելով:

—Երկու չլինինք, երեք լինինք. դու էլ արի:

Եւ երեքը միասին առաջ գնացին...


Մէկ էլ յանկարծ մի Գայլաձուկ վրայ վազեց, ուզեց բռնել նրանց, ուտել:

Այդ փոքրերը ինձ են պատկանում, չհամարձակուես դրանց կուլ տալ, ասաց Կապուտը քարերի տակից: Եւ Գայլաձկան հետ կոռուի բռնուեցան:

Կոռուից օգտուելով գետի հշխանը միւս կողմից ելաւ, նրանց վրայ վազեց, բայց Կողակ ձուկը առաջը կտրեց— իմս են, ասաց, իսկի ձեռք չտաս:

Յանկարծ վերեից լայն սփոռցի պէս մի բան վայր ընկաւ, ամենքին կալաւ, իւր մէջ հաւաքեց... Ծանը ուռկանն էր, որ գետի ափից ձկնորսը ուժով նրանց վրայ նետեց:

—Կորանք, մենք կորանք, ձկներն ասացին, ցանցի մէջ ընկան, ցամաք հանուեցին:




52. Փիղն ու Քոթոթը

Մէկ փիղ առած ման կածէին
Փողոցներից անցընելով.

Յանկարծ քոթոթ մի կոռւասէր
Վըրայ վազեց խիստ հաջելով:

—Զայնդ կտրէ, դրացի եղբայր,
Ասաց գամփոր մեր քոթոթին.

Զես տեսնում որ ծաղը եղար
Բոլոր շների դու առաջին:
Դու ով ես և փիղը ով.
Ահա քո հկքն է բռնըում,
Իսկ նա հանդարտ և անխուսվ,
Հաջելուդ էլ ուշք չէ դնում:
«Հա-հա, հաֆ-հաֆ, դու չիմացար
Եւ իմ միտքը չըհասկացար.
Հեռուից կանգնեմ, կռուեմ հետը,
Որ մեծ մարդու պէս երեամ
Եւ ուրիշներին էլ ասել տամ՝
Տեսէք, քոթոթն որքան քաջ է,
Որ փղի դէմ էլ կըհաջէ»:



Պատմէցէք, ինչ որ տեսնում էք այս պատկերի վրայ.



53. Մ ա ր դ լ

Մարդու մարմնի անդամները՝ գլուխ, պարա-
նոց, (վիզ), բուն, ձեռներ, ոտներ:
Դիմի մասերը՝ գագաթ, ծոծրակ, քունք,
ճակատ, դէմք:
Դէմքի մասերը՝ յօնքեր, աչքեր, քիթ, թշեր,
բերան, ծնոտ:
Բնի մասերը՝ կուրծք, փոր, կողեր, թիկունք,
մէջք:

Աչքով տեսնում ենք առարկան, որոշում ենք նրա
մեծութիւնն ու փոքրութիւնը:

Ականջով լսում ենք առարկայի ձայնը, որոշում ենք
ձայնի ոյժը, քաղցրութիւնը:

Քթով հոտոսում ենք, որոշում ենք առարկայի բուր-
մունքը, գարշութիւնը...

Լեզուով ճաշակում ենք, որոշում ենք առարկայի
քաղցրութիւնը, դասնութիւնը...

Մատներով շօշափում ենք առարկան, որոշում ենք
նրա պնդութիւնը, փափկութիւնը, սառնութիւնը, տաքու-
թիւնը, կոշտութիւնը, կոկութիւնը...

54. Առածներ՝ Անուշ հոտը վարդից ուզիր, մարդութիւնը
մարդուց ուզիր:

Անհունար մարդու լեզուն երկար կըլինի:
Ուրիշի աչքը բեզ համար լոյս չի տալ:

55. Ն ո ւ ր ի ն

Սաստիկ շոք ամառ էր. երկնքի երեսին ամպի կտոր չէր երեռմ. երկիրը քարի պէս պնդացել էր:

Առուները ցամաքել էին. աղբիւրների ջուրը պակասել էր, խոտերը գեղնել էին, արտերը թառամել:

Երկրագործը դուրս էր եկել դաշտը, տխուր նայում էր իր ցանքերին և ասում. «Աստուած ջան, ինչ որ կարող էի, արեցի. հողը բաւական խոր ցելեցի, ընտիր սերմով սերմեցի և ժամանակին ցաքեցի. մնացածը Քո սուրբ կամքիցն է կախուած»:

Միւս կողմը գիւղի պառաւները ժողովել էին մանր տղաներին, գոյն-գոյն հալաւներով զարդարել էին իրանց ձեռքով շինած խաղատիկինը, նուրին, տուել էին նրանց և պատուիրել, որ գնան, տնէ-տուն ման գան, փող-մող հաւաքեն, բերեն, մատաղ անեն, որ Աստուծու աչքը քաղցրանայ, երկինքը բացուի, անձրև գայ:

Գնում են մանրիկ տղաները, ման են գալիս տնէտուն, ամեն դռան կանգնում են և երգում.

Նուին-Նուրին եկել է,
Նախշուն Հուրին եկել է,
Շիլա շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է:
Ե՛ղ բերէք, վարսը քսենք,
Զնւը բերէք, գլխին ածենք,
Մեր Նուրինի փայը տըւէք,
Ուտենք, խմենք, քէփ անենք:

Տան-տիկինները դուրս են բերում մի փարչ ջուր, ածում են Նուրինի գլխին, տալիս են մանուկներին՝ որը սև փող, նրը իւղ, նրը բրինձ. նրանք էլ տանում, պառաւներին են տալիս, որ մատաղ անեն, աղքատներին բաժանեն, Աստուած էլ խղճայ, անձրև ուղարկի:

56. Ճ ո ւ ր ի *)

(Ա ր և ա բ ե ր)

Ճողի-Ճողի, ճոլ չըկայ,
Խաւիծ անեմ, եղ չըկայ,
Ճողին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ:

Չըւան բերէք, դուրս հանենք,
Թնկ բերէք, կցան անենք,
Չնւ բերէք, թաթին դնենք,
Ե՛ղ բերէք, վարսին քսենք:

Խոփը պատումն է ժանգոտել,
Զեկչը տափումն է ժանգոտել.
Կանանչ դաշտերին ենք կարօտ,
Կարմիր արևին ենք կարօտ:

57. Հ Ա Յ Բ Մ Ե Ր

 Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո. Եկեսցէ արքայութիւն Քո. Եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տնւր մեզ այսօր. թնդ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց և մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ, զի Քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք այժմ և յաւիտեան:

*) Արևաբերի ծէսը կատարում է նոյն եղանակով, ինչպէս Անձրևաբերինը:

58. Ուլերն ու գայլը

Հիսում է-չի լինում մի այծ։ Այս այծը անտառում իրան համար տուն է շինում և իր զաւակների—փոքրիկ ուլերի հետ բնակւում է նրա մէջ։ Ամեն առաւօտ մայրը դուրս է գնում արածելու։ Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին. «Ո՞րդիք, դոները փակեցէք, հանգիստ կացէք և եթէ դրսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»։ Ասում է ու գնում. Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթնով լցնելուց յետոյ, այծը տուն է գալիս։ Տան դըռները փակ են։ Նա պողերով դուռը ծեծում է ու կանչում։

«Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պըտուրիկ այծուկներ,
Ելէք, բացէք տան դուռը.
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերը բաց են անում դուռը։ Մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին գնում է արածելու։

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը։ Նա մտքումը գնում է, որ խարելով ներս մտնէ ուլերի փարախը, երբ մայրն այստեղ չլինի։ Մի օր, երբ այծը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթովը դռանը խփում է ու կանչում։

«Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պըտուրիկ այծուկներ,
Ելէք, բացէք տան դուռը.
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերն ականջ են գնում. նրանք հասկանում են, որ դուռը ծեծողը իրանց մայրը չէ և պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորիր, հեռացիր այդ տեղից. մեր մայրը բարակ ձայն ունի և քաղցր է մկըկում. դուռն էլ պողերով է ծեծում»։ Ասում են ու դուռը բաց չեն անում։ Գայլը թողում, հեռանում է։ Փոքր ժամանակից յետոյ

գալիս է մայրը. Նա գովում է ուլերին, որ դուռը բաց չեն արել։ «Դուք շատ լաւ էք արել, որդիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ՝ նա ձեզ ամենքիդ էլ կ'ուտէր»։

59. Պառաւն ու այծը

Մի խեղճուկ պառաւ կար շատ հին ժամանակ. Նրա նիստ ու կացը պատմեմ, իմանաք.
Պատմեմ, պատմեմ, պատմեմ, իմանաք։

Պառաւը աղքատ էր, կով, գոմէշ չունէր.
Դիփ եղած-չեղածը մի այծ, մի տուն էր.
Մի այծ, մի այծ, մի այծ, մի տուն էր։

Տունն էլ մի ծակուռ էր, գետնի մէջ փորած.
Ինքը մի խեղճ կնիկ, կորած-մոլորած.
Կորած, կորած, կորած-մոլորած։

Այծը նա պահպանեց ամբողջ ձմեռը.
Մօտիկցաւ գարունը, թեթեցաւ բեռը.
Ի՞նչ լաւ, ի՞նչ լաւ, թեթեցաւ բեռը։

«Այժմ արօտ կ'երթանք, մազմրզնու ընկեր.
Կ'ուտես կանաչ խոտը, թարմիկ, կաթնաբեր.
Թարմիկ, թարմիկ, թարմիկ, կաթնաբեր։

Դու ինձ կաթ կըքերես, կը հոգամ տունս,
կըծածկեմ մարդկանցից իմ խեղճութիւնը.
Հա-հա, հա-հա, իմ խեղճութիւնը»։

Այսպէս խօսեց տատը մի լաւ առաւօտ,
կաթնատու այծիկը դուրս տարաւ արօտ.
Ուրախ-ուրախ դուրս տարաւ արօտ։

Բայց խեղճ կնոջ բախտից քամի վերկացաւ,
Զիւն, բուք ու փոթորիկ չորս կողմ բարձրացաւ.
Վայ-վայ, վայ-վայ, չորս կողմ բարձրացաւ:

Պառաւը մոլորուեց, այծը կորցըրեց.
Գայլը նըրան ճանկեց, փորը լրքըրեց.
Կերաւ, լափեց, փորը լրքըրեց:

Մեծ նանը տուն դարձաւ արցունքն աշերին,
Այծից, կաթնից զրկուած այն ցուրտ օրերին:
Ա՛խ-վախ, ախ-վախ, այն ցուրտ օրերին:

60. Մ ե ղ ո ւ ն ե ր

Գարունն սկսուեց. արեգակը հալեցըրեց դաշտերի ձիւնը.
Հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան կանաչ խոտի
բողբոջներ. ծառերի կոկոնները բացուեցին և փոքրիկ
տերեններ առաջ բերին:

Ահա մեղուն էլ զարթնեց ձմերային քնից, սրբեց
աշերը բրտոտ թաթիկներով, զարթեցըրեց ընկերներին և
միասին դուրս նայեցին լուսամուտից, որ տեսնեն, թէ
ձիւնը, սառուցը և հիւսիսային ցուրտ քամին անցել են:

Մեղունները տեսնում են, որ արեգակը փայլում է,
որ ամեն տեղ տաք է և լոյս. նըրանք գուրս են դալիս
փեթակից և թոշում են դէպի ծիրանի ծառը:

«Սիրուն ծիրանի, մի բան չունիս խեղճ մեղուններիս
համար. մենք երկար ժամանակ քաղցած ենք»:

—Ո՛չ, —պատասխանում է ծիրանի ծառը. —դուք շատ
շուտ էք գուրս եկել. իմ ծաղիկներս դեռ պահուած են
կոկոններիս մէջ. Գնացէք, նշենուն հարցըէք:

Մեղունները թռան, գնացին նշենու մօտ. «Սիրելի
նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուններիս համար»:
—Վաղը եկեք, սիրելիք, —պատասխանում է նըրանց

նշենին. —այսօր ինձ վրայ ոչ մի բացուած ծաղիկ չկայ. իսկ
երբ բացուին, ես մեծ ուրախութեամբ կընդունեմ ձեզ:

Թռան մեղունները կակաչի մօտ, նայեցին նրա փայ-
լուն գլխին. բայց նա էլ ոչ հոտ ունէր և ոչ մեղր:

Մեղունները տրտում և քաղցած կամենում էին յետ գնալ
տուն, բայց տեսան թփի տակ մանուշակի մուգ-կապոյտ
ծաղիկը: Սա բաց արաւ մեղունների համար իր կոկոնները,
որոնք լիքն էին անուշ հոտով և քաղցր հիւթով: Կերան-
խմեցին մեղունները և ուրախ զըւարթ յետ դարձան տուն:

61. Զորս ցանկութիւն

1. Ձմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գարեգինը
իր ընկերների հետ խաղում և սղում էր հաստ սառուցի
վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-ուրախ տուն
վազեց և ասաց հօրը. «Ա՛խ, հայրիկ, ի՞նչ պատուական
եղանակ է ձմեռը. որքան ուրախութիւններ ենք անում
մենք՝ ձնագնդի ենք խաղում, սղում ենք սառուցի վրայ,
սահնակներով զբունում ենք... Ա՛խ, ի՞նչ կըլինէր, որ
միշտ ձմեռ լինէր»: Հայրը հանեց ծոցի տետրակը և ասաց.
«Գրիր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գարեգինը գրեց:

2. Ձմեռն անց կացաւ. Գարունը եկաւ: Բացուեցան
ծառերի ծաղիկները. բարձրացան դաշտերի խոտերը. ամեն-
նայն տեղ ոստոստում էին հազարաւոր թիթեռներ ու
բգէզներ: Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քա-
ղեց, թիթեռներ բռնեց. իսկ երբ երեկոյեան տուն եկաւ,
ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ որքան ուրա-
խացայ ես այսօր. ճշմարիտ, շատ հիանալի եղանակ է
գարունը և եթէ ինձ մնար, ես կըցանկանայի, որ միշտ
գարուն լինէր»: Հայրը հանեց տետրակը և առաջարկեց
Գարեգինին, որ իր ցանկութիւնը գրի: Գարեգինը գրեց:

3. Ամառն անցաւ: Դաշտերի խոտերը հասել էին և
հնձող էին կանչում: Գարեգինն ու հայրը գնացին խոտ
հնձելու: Քանի որ հայրը վեր էր տալիս անուշահոտ խոտը,
Գարեգինը իւր զուարձութիւններն էր անում՝ ձուկն էր
բռնում գետիցը, հատապտուղներ էր հաւաքում, զլորում
էր հոտաւէտ խոտերի վրայ: Երեկոյին, տուն յետ դառ-
նալիս, նա ասաց հօրը. «Ահա այսօր ես անչափ ուրա-
խացայ. երանի ամառը վերջ չունենար»: Գարեգնի այս
ցանկութիւնն էլ գրուեցաւ տետրակի մէջ:

4. Վերջապէս եկաւ աշունը: Այդիներում լաւ-լաւ
պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սեր-
կելը, խաղողը... Մարդիկ դուրս էին եկել այգեկութի:
Գարեգինն էլ իր ծնողների հետ գնաց այդի և քաղն
սկսեցին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվզում նա
մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խա-
ղում և հատապտուղները բերանը զցելով՝ անուշ անում:
Վերջը նա վազեց հօր մօտ, փաթաթուեց նրա պարանոցով
և ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն
է»: Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց
տըւեց, որ նա գարնան, ձմեռուան և ամառուան համար
էլ միւնոյն բան է ասել:

Վ Ե Ր Զ



Տատը թոռնիկին

(Առողջանութեան զիմաւոր նշանները)

Տօ-տա, տօ-տա՝

Ոտիկները շուտ-շուտ փոխիր, բալա ջան.

Տօ-տա, տօ-տա՝

Տօտիկները ամուր կոխիր, լալա ջան...

Տօ-տա, տօ-տա՝

Արի, արի, ինձ ձի արա, քեզ մատաղ.

Տօ-տա, տօ-տա՝

Արի, մօրը պաշի արա, քեզ սաղաղ... *):

Տօ-տա, տօ-տա՝

Հըրես եկաւ իմ բալիկը վազելով,

Օ-խայ, օ-խայ՝

Պաշի արաւ իմ շըրթունքը վիզելով:

ՀԱՅԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Երես՝ 64 | Փետուրէ գրիչ: || Հուլ.

» 69 | 2ու: || Գնացկան ջուր. գետ:

» 71 | Հրացան: || Թուր:

» 76 | Դրասեղան: || Հեշտակո (սամօվար):

» 79 | Կառքի անիւները:

*) Բալա ջան—զաւակս. լալա ջան—ծաղիկս. ձի արա—գրկիր.
քեզ մատաղ, քեզ սաղաղ՝ նոյն նշանակութիւնն ունին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս տաղագրութեան ժամանակ գրքիս բովանդակութիւնը
որոշակի բաժանել ենք երեք մասի՝

- ա. Այբբենական մասը բռնում է 41 երես և բովանդակութիւնը էլեկտրոնային հաստիքութիւնում է վերլուծանելի բառեր, նախադասութիւններ, մանկական ոտանաւորներ, առակներ...
- բ. Գրքիս միջին մասը տալիս է միքանի անհրաժեշտ տարրական (քերականական) վարժութիւններ, որոնցից իւրաքանչյւրի համար տուած են կարճիկ ոտանաւորներ և առակներ,
- գ. Գրքիս վերջին բաժինը բուն ընթերցարանն է՝ բազմաթիւ նիւթերով իրազնութեան, գրաւոր աշխատութիւնների, բացատրական և պատմողական զբոյցների և անգիր սովորելու համար:

Գրաւոր օրինակների թիւը սահմանափակ է, իսկ գրաւոր վարժութիւնների համար առաջարկուած նիւթերը բազմազան են:

ՆԻԿՈՂԱՅՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԳԵՍՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ ՀՐԱՏԱՐՈԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, առաջին տարի, այրքենարան և
սկզբնական ընթերցարան, բազմաթիւ ընտիր
պատկերներով և գրութեան օրինակներով. 37-դ
տպագրութիւն. գինն է 20 կ.
2. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երկրորդ տարի, երկրորդ
գիրք ընթերցանութեան այբուբենից յե-
տոյ, 25-դ տիպ. բարեփոխուած և լրաց-
րած. գինն է 35 կ.
3. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երրորդ տարի. երրորդ տարուայ ու-
սուցման նիւթը ազգային ուսումնարանների
համար, ուղղագրական և քերականական գիտե-
լիքներով, 17-դ ճոխացրած տպագրութիւն.
գինն է 50 կ.
4. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, չորրորդ տարի. չորրորդ տարուայ
ուսուցման նիւթը ազգային ուսումնարանների
համար. 12-դ փոփոխած և լրացրած տպագրու-
թիւն. գինն է 55 կ.
5. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ քերականութեան տարերքը ըն-
դարձակ յառաջարանով. գինն է 50 կ.
6. ՀԱՅՈՐԴԻ Սրբազն պատմութիւն Հին-Կտակարանի.
գինն է. 50 կ.
7. ՀԱՅՈՐԴԻ Սրբազն պատմութիւն Նոր-Կտակարանի.
գինն է 50 կ.
8. ՀԵՆՉԵԼԻ բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ
Ա. և Բ. տարի, գինն է 35 կ.
9. ՀԵՆՉԵԼԻ նոյնը, երրորդ տարի. գինն է 50 կ.

«Մայրենի Լեզու»-ի բայր մասերը բայլաւուած են պատշաճաւոր իշխանութեան
կալմից ուղիւ ձեռնարկ՝ Հայերէն լեզուն դասաւանդելու ժամանակ:

2013

4543



